

## ՆԱԽԱԳԱՆ ԱՍԱՏ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՅ

Երկուշաբթի, 28 Մարտ 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ Իրապարակեց 2022-ի «15» թուակիր հրամանագիրը, որուն համաձայն 1949-ի «148» թուակիր պատժամիջոցներու յատուկ հրամանագիրին յօդուածները փոփոխութեան պիտի ենթարկուին: Նոր հրամանագիրին համաձայն, պատիժի պիտի ենթարկուի սուրիական պետութեան դէմ ապատեղեկատուութիւն տարածող կամ լուր մը չափազանցուած ձեւով ներկայացնող իւրաքանչիւր քաղաքացի, նուազագոյնը վեց ամիս բանտարկութեամբ: Զրամանագիրին համաձայն, պատիժի կ'ենթարկուի նաեւ իւրաքանչիւր քաղաքացի, որ Սուրիոյ հակառակորդ պետութիւն մը կը գովաբանէ, նպատակ ունենալով ստորնացնել Սուրիոյ դիրքը: Զրամանագիրին համաձայն պատիժի կ'ենթարկուի նաեւ այն քաղաքացին, որ Սուրիոյ տարածքային ամբողջականութեան դէմ կ'արտայայտուի, Սուրիայէն հողատարածքներ մասնատելու քարոզչութիւն ընելով:



## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՉՈՒԱՐԹՆՈՅ» ԵՐԳՉԱՆՈՒՄԲԸ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ ՀՐԱՄՅՈՒՅ ՂԱՍԱԿԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ՀԱՐՈՒՏ ՓՈՒՆՉ ՄԸ

Զովանաւորութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Կիրակի, 27 Մարտին Զամազգայինի



53-ամեայ «Չուարթնոց» երգչախումբը հանդիսատեսին հրամցուց երգչախմբային բազմաձայն երգեցողութեան գոհարներ, մեկնաբանելով Կո-




միտասէն, Խաչատուր Աւետիսեանէն, Արթուր Գրիգորեանէն, Արմէն Տիգրանեանէն, Արմէնուհի Կարապետեանէն եւ այլ հայ ու օտար երաժիշտներէ մշակումներ:

51 երգողներէ բաղկացած երգչախումբը հանդէս եկաւ խմբավարութեամբ մայեսթրա Գայիանէ Սիմոնեան-Տէրեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Լիզա Սէրայտարեան-Աւրնեանի: Կարգ մը երգերու ընկերակցեցան նաեւ Զամազգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի «Սարդարապատ» պարախումբի անդամները:

Շար. Էջ 8

## «ԱՐԿԱՐԱՅԻ ԼՈՒԹՈՒՄ-ՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՅ ՃԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ» ԳԻՏԱԻՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱԼԷՊԻ ՄԵՉ ՏՊՈՒԱԾ ԱՐԱԲԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Զովանաւորութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Նախաձեռնութեամբ Սուրիոյ Զայ Դատի Յանձնախումբին, Զինգշաբթի, 24 Մարտ 2022-ին, Ս. Աստուածածին եկե-



ղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ «Արդարացի Լուծում-Զատուցումներ Զայոց Տեղասպանութեան» գիտաիրաւական հրատարակութեան Զալեպի մէջ պատրաստուած եւ տպուած արաբերէն թարգմանութեան ներկայացումը:



Ձեռնարկին ներկայ էին Զալեպի մուֆթին, Կրօնական կալուածներու տնօրէնը, հայ, իսլամ եւ քրիստոնէայ կրօնապետներ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխաններ, Սուրիոյ Պաաս, ազգային եւ համայնավար կուսակ-



ցութեանց, ինչպէս նաեւ Աղեքսանտրէի միութեան եւ այլ հասարակական միութիւններու ներկայացուցիչներ, հալեպահայ միութիւններու եւ տեղական լրատուամիջոցներու ներկայացուցիչներ, Զալեպի համալսարանի դասախօսներ, դեկաններ, Սուրիոյ ազգային լեզուներու բարձրագոյն ուսումնարանի տնօրէնը, իրաւաբաններ եւ արհմիութիւններու ներկայացուցիչներ:

Զանդիսավար Թիմա Մուրատեան ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու հայ եւ արաբ նահատակներու յիշատակը: Բացման արաբերէն խօսքով փաստաբան Պայքար Թովմասեան ներկայացուց Զայոց Տեղասպանութեան ճանաչման եւ արդար հատուցումի իրաւական հետապնդման կարելորու-



Շար. Էջ 4

### Խմբագրական

### ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՒՐԻՈՅ ՕՐԻՆԱԿԸ

Սուրիական պատերազմն անցաւ տասնմէկ տարի, երկիրն ու ժողովուրդը կրեցին աննկարագրելի դժուարութիւններ, երբեմն հասնելով յուսահատութեան շեմին, այդուամենայնիւ Սուրիոյ ղեկավարութեան ինչպէս պատերազմի տարիներուն, այնպէս ալ յետպատերազմեան շրջանին հայրենիքը պահելու, հասարակութեան մօտ հայրենասիրութեան եւ ազգային ու քաղաքացիական գիտակցութեան սերմերը ցանելու նպատակաւորուած քաղաքականութիւնը երեւելի կը դառնան յատկապէս Սուրիոյ նախագահին վերջին ամուսն հանդիպումներուն եւ որոշումներուն ընդմէջէն:

Նախ յիշենք, թէ ինչպէս նախորդ տարուան Օգոստոս ամսուն, Սուրիոյ նախագահը հանդիպեցաւ սուրիական բանակի սպաներուն, հրամանատարներուն եւ գնդապետներուն հետ, մեծարեց զիրենք ու բոլոր այն զինուորները, որոնք հայրենիքի պաշտպանութեան համար պատրաստ են իրենց լաւագոյնը զոհել ու հայրենիքին ապահովութիւնը վերականգնել:

Սուրիոյ նախագահին մէկայլ յատկանշական հանդիպումը Ռուսոցչաց տօնին առիթով 20 եւ անելի տարիներու ծառայութիւն ունեցող ռուսօցիներու եւ կրթական մշակներու հետ էր, ուր այս անգամ շեշտը կը դնէր նորահաս սերունդներու դաստիարակութեան առաքելութեան վրայ, դարձեալ էական համարելով ազգային գիտակցութեամբ օժտուած, դժուարութիւններու դէմ պայքարող, ո՛չ թէ անոնցմէ փախուստ տուող, նախաձեռնող, գործունեայ, հաւաքական շահը հետապնդող, ո՛չ թէ անձնասեր, հարցերու լուծում գտնող, ո՛չ թէ միայն բարեկեցիկ կեանքի ապահովման համար նկրտող, այլոց փորձառութիւններէն օգտնուող, ո՛չ թէ ուրիշներու հաշուոյն ապրող սերունդներու պատրաստութիւնը եւ հաւատարմութիւնը այս առաքելութեան մէջ ռուսօցիչին կարելորդ դերակատարութեան կոչ կ'ուղղէր ռուսօցիներուն ծրագրաւորեալ աշխատանք տանելու այս ուղղութեամբ:

Սուրիական հասարակութեան յառաջընթացին առումով Սուրիոյ նախագահին երրորդ ակնառու հանդիպումը 19 Մարտին էր, քրիստոնեայ հոգեւոր պետերուն հետ, «Եկեղեցին սիրոյ տուն» խորագիրը կրող համագումարին, Դամասկոս: Այստեղ նախագահը կարելորդ համարելով հասարակութեան հոգեւոր դաստիարակութիւնը, նկատել տուաւ, որ կրօնական հաստատութիւններուն դերը չի սահմանափակուիր միայն հոգեւոր ծառայութեամբ, այլեւ կ'ընդգրկէ հասարակական կեանքի բարելաման նպաստելու յոյժ կարելորդ առաքելութիւնը:

Այս բոլոր հանդիպումները իրականութեան մէջ հայրենիքի պաշտպանութեան, հասարակութեան մէջ համերաշխութեան պահպանման, յետպատերազմին ընկերային կեանքի բարելաման համար համապարփակ ծրագրի մը մասին կը խօսին: Այս ծրագրի պատկերը կարելի է համարել նախագահին 28 Մայիսին ստորագրած 15 թուակիր հրամանագիրը, որուն մէջ կը շեշտուի, թէ Սուրիոյ տարածքային ամբողջականութեան դէմ գործող, կամ նոյնիսկ արտայայտուող, այդ իմաստով քարոզչութիւն կատարող, հասարակական կարծիքին վրայ ազդող իւրաքանչիւր քաղաքացի երթակալ է քրեական պատիժի:

Հայրենիքի տարածքային ամբողջականութիւնը ամեն մակարդակներու վրայ պաշտպանելու կոչ մըն է այս, որ կը հնչէ երկրի ղեկավարութեան առաջին դեմքին կողմէ եւ որպէս օրենք կիրարկման կը դրուի, յանուն սուրիական հայրենիքի պաշտպանութեան եւ սուրիական հասարակութեան մօտ հայրենիքի պաշտպանութեան գիտակցութեան ամրապնդման:

Այս բոլորը ցոյց կու տան, որ Սուրիոյ ղեկավարութիւնը, տասնմէկ տարի անվիատ դէմ դնելով աշխարհի մեծագոյն պետութիւններու սադրանքներուն եւ Սուրիան պառակտելու քայքայել փորձող ճիգերուն, առանց յուսահատութեան, ծրագրեալ կերպով կը շարունակէ հայրենիքի պաշտպանութեան, գիշումի քաղաքականութեան բացառման եւ սուրիացի հասարակութեան մօտ ազգային գիտակցութեան բարձրացման մարտավարութիւնը, ինչ որ միայն յարգանքի կրնայ արժանանալ յատկապէս այնպիսի ժամանակներու մէջ, երբ արեւմտեան երկիրներ ամեն ջանք ի գործ կը դնեն ժողովուրդներու ազգային գիտակցութիւնը աղօտելու, իրենց շահերուն համար երկիրներ մասնատելու, ազգերու իրաւունքներ ու դատեր անվերջ թաղելու՝ խաղաղութեան կեղծ շղարշին տակ:

Որքան պիտի փափաքէիք, որ Հայաստանի ղեկավարներն ալ նոյն վճռականութեամբ առաջնորդէն մեր երկիրը աշխարհաքաղաքական ներկայ յորձանուտին մէջ եւ հայրենիքի մասնատումը հաշտ աչքով դիտելու, յանուն կեղծ խաղաղութեան պարտուողական քաղաքականութիւն վարելու, ազգային արժեքներն ու մեր հաւատքի ամրոցները, հայոց բանակը թուլացնելու փոխարէն խիզախօրէն ուղղուին հայրենիքի պաշտպանութեան, հայ հասարակութեան մօտ ազգային իրաւունքներու պաշտպանութեան ջանքը վառ պահելու քաղաքականութեան:

«Գ.»

-Երեքշաբթի, 29 Մարտ 2022-ին, ՄԱԿ-ի մօտ Արաբական Միացեալ Էմիրութիւններու բանագնաց Լանա Չաքի Նասիպա, ՄԱԿ-ի Միջազգային Անվտանգութեան Խորհուրդի նիստին ընթացքին յայտնեց, որ Արաբական Միացեալ Էմիրութիւններ աջակցութիւն կը յայտնէ Սուրիոյ տագնապի քաղաքական լուծման առնչուող բոլոր այն միջոցներուն, որոնք կը յարգեն միջազգային «2254» թուակիր որոշումի յօդուածները:



Բանագնացը ըսաւ. «Անհրաժեշտ կը համարենք արաբական աշխարհի հարցերու լուծման գծով ՄԱԿ-ի Միջազգային Անվտանգութեան Խորհուրդին եւ Արաբական Լիկայի գործակցութիւնը, յատկապէս սուրիական տագնապի լուծման առումով, որովհետեւ, Սուրիոյ քաղաքական կայունութիւնը արաբական ապահովականութեան հիմնական գործօններէն մէկն է»:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ Մըքտատ Չորեքշաբթի, 30 Մարտին բանակցութիւններ վարեց Իրանի Իսլամական Հանրապետութեան խորհրդարանական խորհուրդի փոխնախագահ դոկտ. Ալի Նիկզատի հետ:



Մըքտատ հաստատեց սուրիա-իրանական յարաբերութիւններուն անքակտելիութիւնը՝ քաղաքական եւ տնտեսական ոլորտներուն, յատկապէս՝ միջխորհրդարանական յարաբերութիւններուն ակնարկելով, մատնանշելով Սուրիոյ շահագրգռուածութիւնը խորհրդարանական դիւանագիտութեան աշխուժացմամբ, կարելորդ նկատելով անոր դերը այս փուլին:

Նախարարը դիտել տուաւ, որ երկու երկիրներու խորհրդարանական մակարդակի գործակցութիւնը կ'արտացոլայ անոնց տարբեր միջազգային ժողովներուն խորհրդարանական մասնակցութեամբ:

Նախարար Մըքտատ կոչ ուղղեց ամրապնդելու Իրանի եւ Սուրիոյ տնտեսական յարաբերութիւնները՝ իշատ սուրիացի եւ իրանցի ժողովուրդներուն:

-Նոյն օրը, Սուրիոյ խորհրդարանը գումարեց իր 25-րդ նիստը, խորհրդարանի նախագահ Համմուտա Սապպադի գլխաւորութեամբ:




Նիստին սկիզբը խորհրդարանի նախագահը ողջունեց եւ շնորհաւորեց սուրիացի ուսանողները, ինչպէս նաեւ Ռուսանողական համալսարանը, նկատել ունենալով որ 30 Մարտը համալսարանի հիմնադրութեան 72-ամեակին կը զուգահիշի:

Ապա խորհրդարանը լայնածաւալ քննարկում կատարելէ ետք հաւանութիւն տուաւ այն օրինագիծին, որ կը ներառէ պենզիոն եւ տիգելային վառելանիւթով աշխատող փոխարակառքերու տարեկան տուրքերուն մանրամասնութիւնները:

-Չորեքշաբթի, 30 Մարտին Սուրիոյ Ռուսանողներու Համալսարանի Լաթաքիոյ մասնաճիւղը արաբ ուսանողութեան օրուան առիթով հեծանիւային մարաթոն մը, որուն մասնակցեց ան մեծաթիւ ուսանողներ: Մարաթոնը մեծ խանդավառութիւն ստեղծեց քաղաքին մէջ, յատկապէս ուսանողութեան մօտ:



-Պիեղոռուսի խորհրդարանի ներկայացուցիչներու պալատի նախագահ Վլատիմիր Անտրեյչենկօն Միւնսքի մէջ Սուրիոյ դեսպան Մուհամմետ ալ Ամրանիի հետ քննարկեց սուրիա-պիեղոռուսական երկկողմ յարաբերութիւններու տարբեր շրջագիծերն ու բոլոր ոլորտներուն մէջ այդ յարաբերութիւններու ամրապնդման ջանքերը:



30 Մարտին տեղի ունեցած հանդիպումին ընթացքին, կողմերը ընդգծեցին խորհրդարանական միատեղ աշխատանքներու ամրապնդման, երկու երկիրներու միջեւ խորհրդարանական այցելութիւններու փոխանակման եւ Սուրիոյ եւ Պիեղոռուսի խորհրդարանական պատուիրակութիւններու միջեւ աշխատանքներու շարունակական համակարգման եւ խորհրդակցութիւններու կարելորդութիւնը:

# Լուրեր Հայաշխարհին

## ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԿ «ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԱՐՅԱՆԻ ՄԵՋ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՎԸ

29 Մարտին, Համագային Հայ Կրթական և Մշակութային միության, ՀՀ ԳԱԱ պատմության հիմնարկին և Արցախի պետական համալսարանին նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ պատմության հիմնարկին մեջ սկիզբ առավ «Կրթամշակութային Կեանքը Արցախի Մեջ» խորագիրով գիտաժողովը: Անկախ ի սկզբանե նախատեսված էր կազմակերպել Արցախի մեջ, սակայն ատրպեյճանական հերթական յարձակումով համաձայնված լարուածութեան խորացման պատճառով տեղի ունեցած է Երեւանի մեջ: Ողջոյնի խօսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղեան, Արցախի ԿԳՄՍ նախարար Անահիտ Յակոբեան, Արցախի պետական համալսարանի ղեկավար Արմեն Սարգսեան, ՀՀ ԳԱԱ պատմության հիմնարկի տնօրէն



Աշոտ Մելքոնեան, Համագային հայ կրթական և մշակութային միության ԿՎ ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան և Համագայինի երեսնեան գրասենեակի տնօրէն Ռուզան Առաքելեան: Արցախէն առցանց միացումով ելոյթ ունեցաւ Արցախի ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Յովհաննիսեան: Գիտաժողովին մասնակից գիտութեան և մշակոյթի ճանաչուած գործիչները անդրադարձան այնպիսի նիւթերու, ինչպիսին են՝ «Կրթամշակութային Կեանքը Արցախի մեջ», «Արցախահայերու Դերը Պաքուի Զարիւղարդիւնաբերութեան Չարգացման Գործին մեջ», «Ատրպեյճանի Կողմէն Կիրառուող Մշակութային Եղեռնագործ Զաղաքականութեան Շարունակական Գործողութիւնները Արցախի մեջ», «Արցախի Ազգաբանական Պատկերը», «Հայկական Մշակութային Ժառանգութեան Իւրացման Զաղաքականութիւնը 1991-2019 թթ.»: ՀՀ Բիւրոյի անդամ, Համագային հայ կրթական մշակութային միության ԿՎ ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան իր խօսքին մեջ յայտնեց, որ այս գիտաժողովը նախատեսուած էր կազմակերպել Արցախի մեջ, սակայն վերջին օրերու դեպքերը պարտադրեցին վայրի փոփոխութիւն: Ան դիտել տուաւ, որ Արցախի մեջ նմանատիպ նախաձեռնութիւն կազմակերպելու ցանկութիւնը պայմանաւորուած է ինչպէս գիտաժողովի նիւթով, այլ նաեւ վերջին պատերազմի ստեղծած իրավիճակով և Արցախին այս ձեւով գոնէ բարոյական քաջալերանք յայտնելով:

## ՀՀ ԱԳՆ «ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՌՈՒՍԻՅՆ ԽԱՂԱՂԱՊԱՆ ԶՕՐԱՄՈՒՄԻ ԴԱՏԱՄԻԱՆԱՏՈՒԹԵԱՆ ԳՕՏԻ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը գոհունակութեամբ կ'արձանագրէ, որ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող երկիրները յստակ արժեւորում կատարած են Լեռնային Ղարաբաղի մեջ իրադրութեան վերջին սրումին մասին՝ փաստելով, որ անկախ հետեւեալն է ատրպեյճանական զօրքերու շարժումին: «Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարած է, թէ բանակային ստորաբաժանումները ետ քաշելու



կոչ յղած է ատրպեյճանական կողմին: 27 Մարտին Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը հաղորդագրութիւն տարածած է, թէ ատրպեյճանական կողմը իր ստորաբաժանումները դուրս բերած է Լեռնային Ղարաբաղի Փառուխ բնակավայրի բաժինէն: Այսուհանդերձ, ստիպուած կ'արձանագրենք, որ ատրպեյճանական ստորաբաժանումներու ներխուժումը Լեռնային Ղարաբաղի Ռուսիոյ խաղաղապահ զօրախումբի պատասխանատուութեան գօտի կը շարունակուի: Կ'ակնկալենք, որ Լեռնային Ղարաբաղի Ռուսիոյ խաղաղապահ զօրախումբը որոշակի միջոցներու ձեռնարկէ ատրպեյճանական ստորաբաժանումներու ներխուժումը դադարեցնելու և Ատրպեյճանի գինեալ ուժերը դուրս բերելու համար: Կարելորկը համարենք ատրպեյճանական ստորաբաժանումներու ներխուժման այս ողջ ընթացքին խաղաղապահ զօրախումբի գործողութիւններուն պատշաճ ընտրութիւնը», ըսուած է հաղորդագրութեան մեջ:

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութիւնը գոհունակութեամբ կ'արձանագրէ, որ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող երկիրները յստակ արժեւորում կատարած են Լեռնային Ղարաբաղի մեջ իրադրութեան վերջին սրումին մասին՝ փաստելով, որ անկախ հետեւեալն է ատրպեյճանական զօրքերու շարժումին: «Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարած է, թէ բանակային ստորաբաժանումները ետ քաշելու կոչ յղած է ատրպեյճանական կողմին: 27 Մարտին Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը հաղորդագրութիւն տարածած է, թէ ատրպեյճանական կողմը իր ստորաբաժանումները դուրս բերած է Լեռնային Ղարաբաղի Փառուխ բնակավայրի բաժինէն: Այսուհանդերձ, ստիպուած կ'արձանագրենք, որ ատրպեյճանական ստորաբաժանումներու ներխուժումը Լեռնային Ղարաբաղի Ռուսիոյ խաղաղապահ զօրախումբի պատասխանատուութեան գօտի կը շարունակուի: Կ'ակնկալենք, որ Լեռնային Ղարաբաղի Ռուսիոյ խաղաղապահ զօրախումբը որոշակի միջոցներու ձեռնարկէ ատրպեյճանական ստորաբաժանումներու ներխուժումը դադարեցնելու և Ատրպեյճանի գինեալ ուժերը դուրս բերելու համար: Կարելորկը համարենք ատրպեյճանական ստորաբաժանումներու ներխուժման այս ողջ ընթացքին խաղաղապահ զօրախումբի գործողութիւններուն պատշաճ ընտրութիւնը», ըսուած է հաղորդագրութեան մեջ:

## ԱՐՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

28 Մարտին Արցախի Հանրապետութեան մեջ վերականգնած է Ատրպեյճանի կողմէն օրեր շարունակ արհեստականօրէն խափանուած կազմատակարարումը:



Կազմատակարարումը գուտ մարդասիրական հարց է, իսկ Ատրպեյճան անկախ օգտագործած է որպէս Արցախի ժողովուրդին վրայ հոգեբանական ճնշում բանեցնելու միջոց: Սակայն արցախահուլթիւնը, դրսեւորելով քաղաքացիական բարձր պատասխանատուութիւն, կրցած է յաղթահարել առկայ իրավիճակը: Բռնաճնշումներու այս քաղաքականութիւնը արժանացած է Հայաստանի Հանրապետութեան, Ռուսիոյ խաղաղապահ ուժերու և միջազգային հանրութեան, յատկապէս՝ Ռուսիոյ, ԱՄՆ-ի, Ֆրանսայի և շարք մը այլ երկիրներու ու միջազգային կառոյցներու խիստ քննադատական արձագանգին: Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի բոլոր խմբակցութիւնները երախտագիտութիւն կը յայտնեն միջազգային կառոյցներուն և մեր բարեկամներուն՝ սկզբունքային կեցուածք դրսեւորելուն համար: Միեւնոյն ատեն, բարձր գնահատելով Արցախի Հանրապետութեան մեջ հաստատուած Ռուսիոյ խաղաղապահ ուժերու կողմէն ձեռնարկուող հետեւողական քայլերը, կ'ակնկալեն ատրպեյճանական զինուժի վերադարձը ելքի դիրքեր:

**«Ազատ Հայրենիք», «Միասնական Հայրենիք», «Արդարութիւն», «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն», «Արցախի Ժողովրդավարական Կուսակցութիւն» Ստեփանակերտ 29 Մարտ 2022**

## ՄԱՍՆՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հռոմի քահանայապետ՝ Ֆրանչիսկոս Պապի տնօրինումով, ի տես ընդհանրական Աքբախօր և վարչականներու մօտալուտ ընտրական ժողովին, Միխիթարեան Միաբանութեան նոր քահանայապետական պատուիրակ նշանակուեցաւ Գեր. Մաւրիցիոյ Մալվեսթիթի, Լոտի քաղաքի եպիսկոպոսը:



Ի տարբերութիւն նախորդ պատուիրակին՝ Լեւոն Արք. Չեքիեանի, իրեն խորհրդատու նշանակուեցան Միխիթարեան միաբաններ՝ Հ. Մեսրոպ Վրդ. Սիւլախեան և Հ. Սերովբէ Վրդ. Չամուրլեան: Զարտուղարն է Հ. Համագասպ Վրդ. Զեչիշեան և մատակարար՝ Հ. Նարեկ Վրդ. Տատուրեան: Նոր Պատուիրակն ու օգնական Հայրերը կոչուած են լուծումներ գտնելու միաբանութեան առկա խնդիրներուն, բոլոր միաբաններուն հետ միասին Սահմանադրութիւնը վերատեսնելու և կատարելու ընտրական ժողովի նախապատրաստական աշխատանքները: Լիայոյս ենք, որ Միխիթարի տան արեւաբոյր ցայգալոյսը իրճուանքի պատճառ դառնայ համայն հայորդիներուն և բարեմաղթութիւն՝ հայազգի վերելքին:

**ԴԻՒՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻՒԲԱՆՈՒԹԵԱՆ**

# ՇՈՒՌ ՏԱԼ ԽԱՂԱՏԱԽՏԱԿԸ



Կարո Արմենյան

Յստակ է այլևս, թե ինչպիսի՜ նոր յարաբերություններու կը պատրաստուի Նիկոլ Փաշինեանի պարտութեան վարչակարգը Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ այս օրերուն եւ այդ մէկը բացարձակապէս անընդունելի է: Ասոնք ընթացիկ կապեր չեն: Ասոնք բարի-դրացիական գեղումներ չեն: Ասոնք մեր երկրի ապագան քանդելու կոչուած համաձայնութիւններ են թշնամի երկու պետութեանց հետ, գլխաւորապէ՛ս Երտողանի եւ Ալիեւի ֆաշիստ, ծաւալապաշտ, փանթուրքիստ եւ հակահայ իշխանութիւններուն կողմէ, որոնք բացէ ի բաց կը յաւակնին լուծարքի ենթարկելու «հայկական խոչընդոտ»ը Կովկասի մէջ:

Այս ուժերը երբեք սեղան պիտի չգան մեզի հետ իրաւահաւասար քննարկումներու համար: Ասոնք սեղան պիտի չգան «փոխ-շահաւէտ» ծեծ-ծեքումներու համար: Ասոնք սեղան պիտի չգան «սահմաններու ապաշրջափակման» փունճ լոզունգներու համար: Ասոնք սեղան պիտի չգան իրավիճակ թելադրելու եւ Փաշինեանական պատրանքներուն (կամ խաբէութիւններուն) վերջ դնելու համար: Ընդհանուր առմամբ, երբ Քեմալ ապտակը ապտակին ետեւէն կը շաչեցնէր հայ բոլշեւիկներու երեսին առանց որեւէ առարկութիւն լսելու Մոսկուայէն:



Հայ անկախ պետականութիւնը իր թիկունքէն դաշունահարող հայ բոլշեւիկ ղեկավարները լախտի ահաւոր հարուած մը ստացան իրենց գլխուն Կարսի մէջ, բայց արդէն շատ ուշ էր... Իրենք «երեսուն արծաթով» վաճառած էին հայ պետականութեան լինելիութիւնը: Չայն դարձուցած՝ անգոյատեւելի եւ պատանդ՝ Մոսկուայի քմահաճոյքին: Բարեբախտաբար փրկուած էր Սիւնիքը շնորհիւ ԶՅԴ հրամանատար Գարեգին Նժդեհին եւ իր սիւնեցի մարտիկներուն: Եւ ատով է, որ Հայաստանը պիտի կարողանար մէկ վերջին գրաւական պահել իր ձեռքերուն մէջ իր ապագայ լինելիութեան պայքարին համար:

Այսօր ազգը պիտի գիտնայ ի՞նչ անկեկալել է եւ ի՞նչ չանկեկալել այս իշխանութենէն: Պետք է վերջ տալ այս սպանիչ շփոթի: Եկած է շրջաժամը մեր անկեկալութիւնները ուղղելու ճիշտ հասցեին՝ մեր յաղթանակը փնտռելու հայ անկախ պետականութեան անմիջական սպառնալիքներու դաշտին մէջ, փոխանակ կեղծ խաղաղութիւններու անպարտութեամբ ժամավաճառ ըլլալու: Մենք այդ դաշտին մէջն է, որ կոչուած ենք կերտելու մեր օրերու նոր պատմութիւնը: Այդ դաշտին մէջն է, որ մենք հաւաքաբար պիտի ընդառաջենք մեր կեանքի իսկական մարտահրաւերներուն:

Իրականութիւնը հետեւեալն է: Տարածաշրջանի բեմին վրայ գործող ուժերէն ամեն մէկը կը թուի մեր տեղը որոշած ըլլալ ընդհանուր խաղակարգին (game plan) մէջ: Եւ այդ տեղը ամենէն ստոր, ամենէն անապագայ, ամենէն փակուղային տեղն է, գոր կարելի է երբեք երեւակայել մեր ժողովուրդին համար: Եւ Նիկոլ Փաշինեանի վարչակարգը՝ Ժիրայր Լիպարիտեանի պէս վիժուկներ ստեղծուած են այդ իսկ տեղը ամեն գնով պարտադրելու մեր ազգին: Ալեւին: Պարտութեան վարչակարգը, - եթէ ուզէ իսկ, - այսօր այլևս անկարող է որեւէ այլ դերակատարութեան: Ան պետք է դուրս դրուի ՀՀ քաղաքական բեմէն եւ վերջնականօրէն լուծարուի որպէս քաղաքական գործոն:

Յաճախ մեզի կը հակաճառեն եւ կը յորդորեն պնդելով, որ Փաշինեան կը գործէ առանց այլընտրանքի եւ կարելին փրկելու նախանձախնդրութեամբ: Այլ խօսքով, ան արժանի է լաւագոյն դիտաւորութեամբ գործողի կանխավարկածին (to the benefit of the doubt): Մեզի կ'ըսեն՝ մի՛ միջամտեք իր գործին... Ազգային ներկայ ճգնաժամի տրամաբանութիւնը, սակայն, բոլորովին այլ բան կը թելադրէ: Պարտութեան վարչակարգը գլխաւորապէս եւ սրտցաւորութեան դիրքերէ գործող ղեկավարը պարտաւոր էր անմիջապէս ներկայացնել իր հրաժարականը ընելով այնպէս, որ երկրի քաղաքական ուժերը արագօրէն վերակազմակերպուէին պետականութեան կեանքի յաջորդ փուլին համար: Փոխանակ՝ գաղտագողի նստելու Ատրպէյճանի եւ Ռուսաստանի պետերուն հետ 9 Նոյեմբերի չարաշուք համաձայնագիրը ձեւաւորելու եւ պետութիւնն ու ազգը դնելու կատարուած իրողութեան առջեւ: Եւ ան պարտաւոր էր անմիջապէս դիմելու երկրի ԲՈՒՆԴ գլխաւոր քաղաքական ուժերուն, - եւ առաջին հերթին՝ Ընդդիմութեան, - Հայրենիքի Փրկութեան Միասնական Կառավարութիւն մշտեղ բերելու: Փոխարէնը՝ Փաշինեան գործեց պարտութեան դիրքերէ ամեն օր աւելի բանալով երկրին դռները թշնամիին առջեւ ամեն օր աւելի անապաշտպանելի դարձնելով հայ անկախ պետականութիւնը թշնամիի ոտնձգութիւններուն դիմաց:

Այս կետին վրայ, ազգը այլևս այլ ընտրութիւն չունի: Ան իր միջոցներով

միայն պիտի դուրս գայ ներկայ փակուղիէն: Իր հանճարով միայն պիտի կասեցնէ հայ անկախ պետականութեան անգլուխ գահավէժը: Եկած է ժամանակը շուռ տալու խաղատախտակը դիմելով բոլոր այն գործամիջոցներուն, գործ ներկայ պայքարի ռազմագծերը կը պահանջեն:

Պարզ խօսքով, եկած է վայրկեանը յարացոյցը (paradigm, պարաստիգմա) հիմնովին յեղաշրջելու՝ սանձը խլելու բոլոր վերոյիշեալ ուժերու ձեռքէն: Եկած է ժամը այդ բանը ընելու անյապաղ՝ անմնացորդ: Զանի որ ասկէ անդին խաղը չէ, որ դրուած է ազգին առջեւ որպէս գերխնդիր, այլ խաղատախտակը:

Հայաստան-Սփիւռք Առաջին Խորհրդաժողովի հարթակէն Հ.Յ. Դաշնակցութիւնը վաղուց հնչեցուցած է այս պատգամը: Իր կազմաւորման սկզբնական փուլերուն մէջ գտնուող հայ անկախ պետականութիւնը բնականաբար պիտի դիմագրաւէր այս սպառնալիքները յատկապէս նկատի առնելով մեր երկրի դաժան հարեանութիւնը: Այսօր եկած է վճռական վայրկեանը անգամ մը եւս ցոյց տալու, որ հայ անկախ պետականութեան լինելիութեան դատը անտէր չէ: Հայաստանն ու Արցախը res nullius (ըբեալ գոյք) չեն, ինչպէս միշտ շեշտած է մեր մեծանուն ուսուցիչը՝ Սիմոն Վրացեան: Հայրենիքի պաշտպանութիւնը մուրացկանութեամբ չէ, որ կ'իրագործուի: Հայաստանն ու Արցախը ի վիճակի են իրավիճակ փոխելու: Եւ փոխելու այնպէս՝ որ ան մշտապէս խարանուի տարածաշրջանի պատմական յիշողութեան մէջ:

Ասկէ անդին ազգին հաւաքական կամքն է, որ պիտի խօսի՝ գործէ: Ընդհանուր առմամբ, ինչպէս 104 տարի առաջ այսօր, Մարտի 24-ին, երբ Երեւանի ժողովուրդը «դիկտատոր» կը հռչակէր Արամը մեր պատմական գրողը կազմակերպելու եւ մեր տեղը վերջնականապէս ամրագրելու տարածաշրջանի քառսին մէջ:

## «ԱՐԴԱՐԱՅԻ ԼՈՒԾՈՒՄ...»

Սկիզբ՝ էջ 1

թիւնը եւ իր խօսքին մէջ շեշտեց, որ «Արդարութիւնը կեանք չունենար եթէ իրաւունքին հետ առնչուած չըլլայ: Հայ Դատը պիտի մնայ այնքան ատեն, որքան Թուրքիա կը մերժէ ընդունիլ Հայոց Յեղասպանութիւնն ու անոր հետեւանքները»:

Այնուհետեւ ջութակահար Տեսիլ Սարեան եւ երգեցողուհի Արմէն Ասայեան մեկնաբանեցին Արաքո Իսպիրեանի «Տուն Իմ Հայրենի» երգը:

Ապա «Արդարացի Լուծում -Հատուցումներ Հայոց Յեղասպանութեան» գիտախորակական հրատարակութեան արաբերէն թարգմանութիւնը ներկայացուց թարգմանիչը՝ իրաւաբան, Հալեպի պետական համալսարանի դասախօս դոկտ. Սպիի Ճորճ Տիպօ:

Ան ներկայացնելով հրատարակութեան բոլոր բաժինները յայտնեց, որ թարգմանութիւնը առիթ հանդիսացաւ Հայոց պահանջատիրութեան, հայ Դատի իրաւական հիմքերուն ծանօթանալու եւ շեշտեց, որ գեղոյցը պատրաստուած է չէզոք օտար ակադեմականներու կողմէ, յստակօրէն կը մատնանշէ միջազգային օրէնքի հիման վրայ հայոց Յեղասպանութեան ոչ թէ ճանաչման տուեալները, այլ արդէն իսկ ճանչցուած ու ՄԱԿ-ի 1948-ի պայմանադրութեան սկզբունքներուն հիման վրայ հաստատուած իրողութիւն ըլլալուն հետեւանքով հայ ժողովուրդի հատուցման իրաւական հիմքերն ու միջոցները:

Իրաւաբանը փափաք յայտնեց գործակցելու Հայ Դատին նուիրուած իրաւական տարբեր աշխատանքներու պարագային, ծանօթացնելու հայոց պահանջատիրութեան իրաւական հիմքերը հանրութեան եւ իրաւական շրջանակներու:

Օրուան եզրափակիչ խօսքը արտասանեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան: Սրբազան հայրը նախ շնորհակալութիւն յայտնեց բոլոր պետութիւններուն եւ ժողովուրդներուն, որոնք ճանչցան ու դատապարտեցին Հայոց Յեղասպանութիւնը, յատկապէս իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրիոյ ժողովուրդին եւ խորհրդարանին, որ երկու տարի առաջ ճանչցաւ ու դատապարտեց Հայոց Յեղասպանութիւնը: Ապա բարձր գնահատեց գիրքի արաբերէն թարգմանութիւնը իրականացնող դոկտ. Սպիի Ճորճ Տիպօյին:

Առաջնորդ Սրբազան Հայրը դիմել տուաւ, որ Հայոց Յեղասպանութենէն ճողոպրած, Սուրիա հաստատուած ու աշխարհով մէկ տարածուած հայ ժողովուրդը, ուր որ գնաց պատմեց իր ապրած ողբերգութիւնը տարբեր ազգերու եւ ժողովուրդներու, տարբեր լեզուներով: Ընտելացաւ նոր կեանքին հետ, սակայն չմոռցաւ իր ցաւը ու մեր մեծ մայրերն ու հայրերը մեզի պատմեցին կորուսեալ մեր հայրենիքին եւ Յեղասպանութեան սարսափին մասին: Հազարաւոր գիրքեր գրուեցան Հայոց Յեղասպանութեան մասին: Իսկ մենք, աշխարհով մենք հետապնդեցինք մեր դատը, պահանջեցինք մեր իրաւունքները ու պիտի շարունակենք պահանջել, նոյնիսկ եթէ Թուրքիան փորձէ կաշառել մեզ, խաբել տարբեր լուծումներ առաջարկելով: Մեր իրաւունքները անկոռնչելի են ու մենք տերն ենք մեր ժառանգութեան, ժամանակն ու փոխուող քաղաքական պայմանները չեն կրնար վերացնել մեր յիշողութիւնն ու պահանջատիրութեան կամքը:

Ապա ըսաւ, որ այս գիրքը ոչ միայն հայ ժողովուրդի իրաւունքները կ'արտացոլէ, այլ ընդհանրապէս մարդկային իրաւունքներու պաշտպանութեան իրաւական միջոցները կը ներկայացնէ:

## ՄԱՅԵՍԹՐԱ ԳԱՅԻԱՆԷ ՍԻՄՈՆԵԱՆ. «ԵՐԲ ԿՈՂՔԻ ՈՒՆԻՍ «ՄԵՆՔ»-Ի ԳԱՂԱՓԱՐԻՆ ՀԱՄԱՏԱՅՈՂ ԱՆՁԻՆՔ, ՎԱՏԱԳԱԲԱՐ ՓԱՅԼՈՒՆ ԱՐԴԻՆՔ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԵՍ»

Արուեստի, մշակույթի, երգի ու երաժշտության մեջ եւս իգական սեռը իւրայատուկ հետք եւ դերակատարութիւն ունեցած է դարերու ընթացքին: Մեր այսօրուան գրուցակիցը՝ տիկ. Գայիանէ Սիմոնեան-Տերեան, հարուստ վաստակ ունի խմբավարական մարզին մէջ: Ան հետեւած է Երեւանի Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժնին: «Չեմ մոռնար իմ ուսուցչուհին՝ վաստակաւոր մանկավարժ Սեդա Ստեփանեանը, որ ինձի շատ բան սորվեցուց թէ՛ խմբավարական, թէ՛ մանկավարժական մարզին մէջ», ըսաւ ան: Տիկին Գայիանէ հետազային բարձրագոյն ուսումը շարունակած է Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցի խմբավարական բաժնին Լեւոն Ստանալով օգնական փրոֆեսորի կոչում:



1992-ին իրաւորուած է Հայէպ, Բերիոյ Հայոց Թեմի «Ս. Մեսրոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբին խմբավարութիւնը ստանձնելու: Նոյն տարին առաջարկ կը ստանայ ստանձնելու Սուրբիոյ Պատանեկան Միութեան «Մեղրի» պատանեկան երգչախումբը, որ մինչեւ օրս, քանի մը տարիներու կատարումով, ունեցած է ազգային-յեղափոխական երգերով 6 ելոյթ: Հետագային ան տարած է այլ աշխատանքներ եւս:

30 տարի է ի վեր խմբավարն է Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդի «Ս. Մեսրոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբին, որ ամէն տարի հանդէս կու գայ բազմաձայն, գունեղ երգացանկով:

2004-ին ստանձնած է Բերիոյ Հայոց Թեմի Կրօնական Ժողովին հիմնադրած «Սաղմոս» հոգեւոր երգչախումբը, որ պատերազմին հետեւանքով 2011-ին դադարած է գործել:

Եղած է Լաթաքիոյ «Նարեկ» մանկական եւ երիտասարդական երկսեռ երգչախումբերու հիմնադիր խմբավար: Քեսապի մանկական «Կանթեղ» եւ երիտասարդական «Կիլիկիա» երկսեռ երգչախումբերու հիմնադիր խմբավար: Քեսապի մէջ 6 տարի աշխատանքէ ետք, պատերազմէ վերջ կրկին Քեսապի մէջ երգչախումբ ղեկավարելը մեծ խանդավառութիւն կը ստեղծէ քեսապահայութեան մօտ:

Ունի նաեւ ձայնամարզութեան դասարաններ: Նախ՝ Կրթասիրաց Մշակութային Միութեան «Կոմիտաս», հետագային, մինչեւ օրս, Համագայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցներուն յատուկ:

2014-ին Կրթասիրաց Մշակութային Միութեան «Կոմիտաս» երաժշտանոցի Նորաստեղծ՝ «Առ-

նօ Պապանեան» քառաձայն երգեցիկ խումբին հիմնադիր-խմբավարն է:

2015-էն մինչեւ օրս խմբավարն է Համագայինի «Չուարթոնգ» քառաձայն երգչախումբին, որ ամէն տարի Նոր ծրագիրով հանդէս կու գայ: Այս աշխատանքին մասին մայեսթրան ըսաւ. «*«Չուարթոնգ»-ը*

*ունեցած է եւս նուագախումբի հետ համերգներ, շրջագայութիւն տարբեր շրջաններ, յատկանշական էր Դամասկոսի Օփերայի սրահէն ներս խումբին մասնակցութիւնը Սուրբիոյ երգչախումբերու փառատօնին: Երգչախումբը կը մասնակցի նաեւ տարբեր ձեռնարկներու՝ միութեանական, պետական մակարդակներով»:*

Մայեսթրան իր աշխատանքներուն անդրադառնալով ըսաւ. «*Ինչ գործ որ ստանձնած եմ, փորձած եմ մասնագիտական բժախնդիր մօտեցում ունենալ, մերժելով միջակութիւնը: Բոլոր խումբերուն հետ լաւ ու գեղեցիկ յիշատակներ դորձնում եմ յիշողութեանս մէջ»:*

Ուշադրութեան արժանի է այն, որ 2012-ին մայեսթրան Հայաստան իր ծնողքին այցելած էր, երբ Սուրբիա տագնապի սեմին էր: Սուրբիոյ շրջափակումին պատճառաւ թէեւ մեկուկէս տարի այդտեղ մնաց ու հիմնադիր խմբավարը եղաւ սուրբահայերէ կազմուած մանկական «Շառաւիղ» երգչախումբին, այնուամենայնիւ որոշեց վերադառնալ Սուրբիա պատերազմի օրերուն, կողակիցին հետ միասին, ամուր պահելով իր կապը Հայէպի մշակութային կեանքին հետ, մնալով Սփիւռքի մէջ իր երգի ու երաժշտութեան պահպանութեան կազմակերպիչներէ: Ան իր այս նուիրումին շնորհիւ, վերադարձէն ետք պարզեցատրուեցաւ Սփիւռքի Նախարարութեան կողմէ «Կոմիտաս» շքանշանով:

Անդրադառնալով երաժշտութեան մարզին մէջ իգական սեռի ներգրուման, մայեսթրան ըսաւ. «*Իգական կամ արական սեռի խնդիր չկայ, եականը մասնագետ ըլլալն է: Իսկյատկապէս փոքրիկներու խմբակ մարզելը քիչ մը դժուար է ու տարբեր մօտեցում կը պահանջէ: Երաժիշտը պէտք է իր ուսման ընթացքին զինուի մասնագիտական գիտելիքներով, ինչպէս նաեւ փորձառութեամբ ձեռք բերած հմտութիւններով, որպէսզի լաւ իմանայ,*

*թէ ինչպէ՛ս պէտք է վարուիլ երեխաներու հետ, նկատի առած անոնց զգայուն ըլլալը: Թէեւ, բնականաբար, մանուկները իգական սեռի խմբավարին ատելի կը հակին, մայրական զգացումի հարցն է այստեղ, որքան մայրական քնքշանք ցոյց տաս, այնքան ատելի կը կապուին երաժշտութեան դասերուն ու երգչախումբի փորձերուն»:*

«*Կան մասնագիտութիւններ, որոնք առաւելաբար տղամարդու վայել են, սակայն ինչ կը վերաբերի երաժշտութեան կամ խմբավարական արուեստին, համաշխարհային շատ օրինակներ ունինք, կանայք նոյնպէս շատ լաւ ղեկավարած են երգչախումբեր, լաւապէս տիրապետելով խմբավարական արուեստին բեմ հանդէս ելած են ծանրագոյն համերգներով»:*

Կարելի է նաեւ մարդկային յարաբերութիւններուն մէջ դրական ըլլալ, լաւ աշխատակազմ ունենալ կողքիդ, «Մենք»-ի գաղափարին հաւատացող անձինք, որոնք ձեռք-ձեռքի կ'աշխատին հետդ՝ հաւաքական նպատակով մը իրականացնելու համար, իսկ դու, որպէս մասնագետ, կողքդ ունենալով լաւագոյն կատարողներ, երգիչներ: Կին ես, թէ տղամարդ էական չէ, հմուտ ըլլալն ու խմբային աշխատանք վարելու ունակութիւն ունենալն է կարելիորդ՝ որոնցմով վստահաբար կարելի կ'ըլլայ փայլուն արդիւնքներ արձա-



նագրել: Երբ մենք միասին ենք, կրնանք յաղթահարել շատ բաներ: Ըլլալով կին, ըլլալով տղաք սեռի ներկայացուցիչ, կը հաւատամ, որ երբ կը տիրէ «Մենք»-ի տրամաբանութիւնը, ամէն դժուարութիւն կարելի է յաղթահարել: Աշակերտներուս տեսաբար կ'ըսեմ, որ դժուար բան չկայ աշխարհի վրայ, պէտք է պարզապէս աշխատանք տանիլ, կին ես թէ տղամարդ տարբերութիւն չկայ: Երբ տաղանդով օժտուած ես տունեայ մասնագիտութեան կամ որեւէ ասպարէզի մէջ, պէտք է փափաք ունենաս հասնելու երազանքիդ: Պիտի մաքառիս, դէմդ ցցուող դժուարութիւնները պէտք է յաղթահարես եւ հասնիս վերջնակէտին, ուր նպատակդ իրականացած կը տեսնես լաւագոյն ձեւով:

Բոլոր այն կիները, որոնք «*Ես կին եմ, չեմ կրնար...*» ըսելով երբեմն կը յուսահատին, կ'ըսեմ՝ եթէ ունիս տաղանդ եւ աշխատասիրութիւն, անպայման կը հասնիս նպատակիդ: Կարելի է ճիշդ ձեւով պայքարիլ ու վերջնակէտին հասնիլն է»:

Մեր գրոյցին ընթացքին մայեսթրան երգչախումբային արուեստին անդրադառնալով ըսաւ. «*Երգ-*

*չախմբային արուեստը բազմաթիւ երգիչներէ ստեղծուած խումբն է, ուր աշխատանքը կը տարուի հաւաքական ամբողջական ուժերով: Ան մանաւանդ երեխաներու մօտ կը գարգացնէ միասնական աշխատանքի գաղափարը, կը գարգացնէ անոնց ձայնային եւ լսողական տուեալները: Երգ ող փոքրիկները կը կերտուին իրրեւ մարդ, կը ծանօթանան բազմաթիւ երգերու՝ հայկական, հայրենասիրական, ազգային, արաբական, օտար, ...: Երգողին ճաշակը կը գարգանայ, նոյնպէս հանդիսատեսն ու մանաւանդ ծնողքը, երբ բեմին վրայ կը դիտեն իրենց գաւակը, մասնակցած կ'ըլլան հաւաքական աշխատանքի յաջողութեան: Երգչախումբը կը փոխէ նաեւ պատանիին հոգեվիճակը: Ան կը դառնայ պարտաճանաչ, ուժեղ նկարագրի տէր, օրինակ դառնալով իրեն ունկնդրող դասընկերներուն»:*

Այս ելոյթներու յայտագիրներուն անդրադառնալով, տիկ. Գայիանէ մէքերեց Կոմիտասին հետեւեալ խօսքը. «*«Մենք պէտք չէ իջնենք ժողովուրդին ճաշակին, այլ անոր բարձրացնենք երգարուեստի բարձրորակ մակարդակի»:* Ժողովուրդը կրնայ շատ բան սիրել, երբ դու յաջողիս դասական երաժշտութիւնը ներկայացնել լաւ ձեւով: Այլ խօսքով, պէտք է ներկայացնես այն ինչ, որ ժողովուրդը չէ ընկալած գեղեցիկ մատուցմամբ, որպէսզի լաւ դորձ-

մուի այդ երգն ու ճաշակը իրեն հոգեկան աշխարհին մէջ: Միեւնոյն ատեն, սակայն, պէտք է մեկնաբանել անոր սիրած երգերը երգչախումբային արուեստի չափանիշներով: Մենք մեր ծրագիրներուն մէջ կը փորձենք ներառնել տեսակարարագրեր, որպէսզի բոլորն ալ հաճոյքով ունկնդրեն: Արուեստը մեծ ուժ ունի, պէտք է օգտագործենք այդ ի շահ մեր ժողովուրդի ճաշակի գարգացման ու պահպանման»:

«*Ինչպէ՛ն կը գարգանայ երգչախումբին մաս կազմող փոքրիկներուն գեղարուեստական ճաշակը*», հարցուցի:

«*Բնականաբար տարիներու ընթացքին երգչախումբի մաս կազմող աշակերտին ճայնը կը գարգանայ ձայնամարդութեան փորձերուն շնորհիւ: Անոր հետ մէկտեղ, Նոր երգերու ծանօթանալով եւ երգելով անոր ճաշակը եւս կը բարեփոխուի ու կը կերտուի: Ունեցած ենք փոքրիկներ, որոնք ձայնային կարողութիւններով օժտուած չէին, բայց նկատի առած, որ Սփիւռքի մէջ գործող սիրողական խումբ ենք, պարտաւոր ենք բոլոր երգել սիրող փոքրիկները ընդունիլ: Իսկ հետաքրքրականը այն է, որ տարուէ տարի անոնց կարողութիւնները կը կատարելագործուին: Ի նորախումբին ինձի, կան Մաշտոցականներ, որոնք շարունակելով այս մարզը, գարդարած են Հայէպի, Հայաստանի եւ Եւրոպայի բեմերը»:*

(շար. 3)  
**Հարցազրոյց վարեց Սեւանայ Հալլաճեան**

## 75 ՏԱՐԻ ԵՒ ԵՐԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

### ԱԶԳ. ԶԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒՍԱԲՈՐ ՈՒՂԻՈՎ Ա.



Ժիրայր Կարապետեան

Սուրիոյ պատմական Յալէպ քաղաքին մէջ, հայաշատ Նոր Գիւղի գլխաւոր ճամբուն վրայ, 1947-էն ի վեր, ամբողջ 75 տարի, իր դռները հալէպահայ աշակերտութեան դիմաց լայն բացած է Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանը, որ միջնակարգի եւ երկրորդականի կրթութեան, ինչպէս նաեւ հայեցի առողջ դաստիարակութեան առաքելութեամբ կը շարունակէ իր երթը:

Մերոպեան շունչով եւ հայկական աւիշով ոգեղինացած ամբողջ մըն է Ազգային Զարէն Եփփէ ճեմարանը, որ 75 տարիներու ընթացքին հալէպահայ կեանքին մէջ դարձած է մարդակերտման ու հայակերտման դարբնոց:

Երբ ճեմարան կ'ըսենք, կը վերջիցենք անոր հիմնադրման օրերուն Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Չարեհ Սրբ. Եպս. Փայասլեանը, որուն անունով այսօր անուանուած է ճեմարանի պողոտան: Չարեհ սրբազան իր առաջնորդութեան շրջանին Բերիոյ Թեմին բոլորանուէր նուիրումով ծառայած է՝ շահելով նաեւ սուրիական պետութեան անվերապահ վստահութիւնը: 1946-ին Սուրիոյ նախագահ Շուքրի Զուարթիին եւ պետական աւագ անիին որոշումով իրեն շնորհուած է արժանեաց Ա. կարգի շքանշան:

Յալէպի մէջ իր կատարած մեծագոյն իրագործումներէն մին կ'ըլլայ Ազգային Զարէն Եփփէ ճեմարանի հիմնադրութիւնը, օրուան ազգային մարմիններուն ծրագրաւորումով: Սրբազան հայրը, Դաշնակցական գործիչ Յրաչ Փափագեանի հետ կը ձեռնարկէ հիմնադրութեան աշխատանքներուն նախ իբրեւ արտօնատեր, ապա իբրեւ տնօրէն եւ մշակ:



Կաթողիկոս օծուելէն ետք անգամ, ան կը շարունակէ նեցուկ կանգնել ճեմարանին, որուն նուիրուած էր ութ տարի, հաւատարմով, որ իր սիրելի հօտին ամենէն անհրաժեշտ կռուաններէն մէկը հայկական երկրորդական վարժարանը պիտի ըլլար: Օրին, Զարէն Եփփէ մայրիկը իր անունով 10.000 քառակուսի մետր տարածութիւն մը գնած էր (այժմու ճեմարանի տարածքը): 1926-ին եւ 1929-ին այնտեղ կառուցած էր ինը միայարկ տաղաւար, 80 սենեակներով եւ հոն պատսպարած իր որբերն ու այրիները: Յետագային այս տարածքին վրայ պիտի հիմնուէր Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանը:

Մեծ կ'ըլլայ Զարէն Եփփէի նիւթական եւ բարոյական աջակցութիւնը ո՛չ միայն ճեմարանին, այլեւ Ազգ. Սահակեան վարժարանին (1923) եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ (1930) կառուցման ծրագրին: Այս տարի դանիացի բարերարուհիին մահուան 88-րդ տարելիցը կ'ամբողջանայ: Անոր երախտապարտ կը մնայ ողջ հայ ազգը:

Դաշնակցական գործիչ Յրաչ Փափագեան եւս իր մեծ ներդրումը բերաւ ճեմարանի հիմնադրութեան, կեանքի կոչելով հայկական երկրորդական վարժարան մը ունենալու եւ գայն հայապահպանման դարբնոց դարձնելու կուսակցութեան ծրագիրը: Ուստի օրուան առաջնորդին, ազգային գործիչներուն եւ ազգային մարմիններուն սերտ գործակցութիւնը ծնունդ տուաւ այս հսկայ ամբողջին:

Փափագեան կարեւոր գործ տարաւ նաեւ հետագային, երբ 1949-էն սկսեալ մինչեւ Լիբանան մեկնումը՝ 1957, շուրջ ութ տարի շարունակ եղաւ ճեմարանի խնամակալութեան ատենապետ ու նորաբաց հաստատութեան ամենադժուար տարիներուն, Չարեհ սրբազանին եւ իր ժողովականներուն հետ, ճեմարանին յառաջընթացին ծառայող ամեն ջանք թափեց: Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանին դերը մեծ եղաւ: Տասնեակ սերունդներ գիտութեամբ եւ հայեցի կրթութեամբ գինուած շրջանաւարտ դարձան ճեմարանէն: ճեմարանը բովանդակ սուրիահայութեան, ապա նաեւ սփռուած հայութեան եւ ճեմարանի հազարաւոր շրջանաւարտներուն գուրգուրանքին արժանի հիմնարկը դարձաւ:

Երախտապարտ կը մնանք ճեմարանի հիմնադիրներուն՝ Միս Եփփէին, Չարեհ Սրբազանին, Յրաչ Փափագեանին եւ անոնց գործը շարունակող Թեօթեօլեաններուն, Տոնապետեաններուն, Նալպաստեաններուն, Խաչատուրեաններուն եւ բոլոր այն մշակներուն եւ գործիչներուն, որոնք 75 տարի շարունակ հիմնադիրներուն լուսաւոր ջախջախ պահեցին:

Երախտապարտ կը մնանք ճեմարանի հիմնադիրներուն՝ Միս Եփփէին, Չարեհ Սրբազանին, Յրաչ Փափագեանին եւ անոնց գործը շարունակող Թեօթեօլեաններուն, Տոնապետեաններուն, Նալպաստեաններուն, Խաչատուրեաններուն եւ բոլոր այն մշակներուն եւ գործիչներուն, որոնք 75 տարի շարունակ հիմնադիրներուն լուսաւոր ջախջախ պահեցին:

## Թուրքիոյ նուրջ

### ՉԱՌՆՇՕՂՈՒ. «ՌՈՒՍ-ՈՒԵՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՈՎԱՆՊԱԿԱՅԻՆ ԷԻՆ»

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն 29 Մարտին Իսթանպուլի մէջ տեղի ունեցած ռուս-ուքրանական բանակցութիւններուն աւարտէն ետք յայտարարութիւն տարածած է, շեշտելով, որ Թուրքիոյ նախագահը հակամարտութեան սկիզբէն ի վեր դիւանագիտական քայլերու կը ձեռնարկէր այս հարցին համար, իսկ Մարտին Անթալիոյ մէջ կազմակերպուած Ուքրանիոյ եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներու հանդիպումը բովանդակային էր:



Չաւուշօղլուն յայտնած է, որ ներկայ պահու դրութեամբ առաջնահերթութիւնը գինադադարի հաստատումն ու քաղաքական լուծման քայլերը կը համարուին:

Յետագային նախատեսուած է երկու երկիրներու նախագահներու հանդիպումը:

### ՉԱՐԵԱՑ...

Սկիզբ՝ էջ 7

արեւմտահայերէնին, Յայաստանի մէջ: Այս առումով խիստ գնահատելի է Անի Չալեանի ճիգը Շիրակի Մարզային գրադարանէն ներս եւ գիս ուրախութեամբ կը լեցնէ, որովհետեւ Անին Յալէպի Յամագայի-նի Յայագիտական Զինարկի ուսանողուհի եղած է, եւ այսօր իր ամբողջ աշխատանքը ի գործ կը դնէ հայերէնին, մանաւանդ արեւմտահայերէնին համար:

Անգամ մը եւս այս օրը հաւասարակշռութեան կու գայ իր լաւով-վատով, սեւով ճերմակով, բայց մանաւանդ մարդ արարածին անբեկանելի յոյսով:

### ՄԻՐՈՒՆ...

Սկիզբ՝ էջ 9

ջեն: Այդ գարնան ծաղիկները, որ հողին տակ են, անոնք իրենց գլուխները հողին տակէն դուրս գալու փորձ կատարեցին, անոնք թերթիկները դողդղացին: Չէ, գարուն ա՛լ ուշացումը գիս կը մտահոգէ, կը վախնամ դուն ալ յուշ կը դառնաս, ու քեզ ալ շատ կը կարօտնանք: Չէ-չէ միտքս հոգ մի ընէր, գարունը որքան ուշ անայ անպայման կրկին կու գայ, կրկին արեւը իր փայլիլուն շողերը արեւ կը սփռէ: Ամեն գիշերէ ետք անպայման արշալոյս կայ: Թիւնէլը (փապուրի «Գ.») որքան երկար ըլլայ, անոր վերջաւորութեան կրկին լոյսի նշոյլը կ'երեւայ: Սակայն կը մնայ, որ սպասումը ամենէն դժուար բանն է, ու ամեն սպասումի հետ կեանքի օրերը կը սպառին: Անոր համար սիրուն գարուն մի՛ ուշանար...:

### ՖՈՒԹՊՈՒԼ...

Սկիզբ՝ էջ 7

Նիք: Յրահանգը հասած էր եղբ. բերդապահին: Վերջինս ամենայն հաւատարմութեամբ գործադրած էր հրահանգը:

Մրցումը վերջ գտաւ ի նպաստ Յայրենի խումբին՝ (2-1)արդիւնքով: ՅԱՇՄ-ի անոյեան, բացառիկ այս խումբը, ինչպէս միշտ, այդ օրը եւս տպաւորիչ, ներդաշնակ եւ բարձր մակարդակի ֆուտպոլի ելոյթ մը ունեցաւ՝ արժանանալով բոլորին գնահատանքին: Յայրենի խումբի մարզիկները եւ պատասխանատուները եւս բարձրօրէն դրուատեցին այս խումբը՝ յաջողութիւն մաղթելով անոր:

Երեկոյեան, ՅԱՇՄ-ի տան մէջ, քաղաքի ակումբին սրահը, տեղի ունեցաւ բացառիկ ընթրից-խրախճանք՝ ի պատիւ Յայրենի պատուիրակութեան, եւ ներկայութեամբ հալէպահայ համայնքի պատկառելի անձնակազմի: Ամոռանալի, հոգեպարար երեկոյ մը ապրեցանք մեր հայրենի հարազատ եղբայրներուն հետ: Արտասանուած ճառերն ու խօսքերը աւելի խրախուսեցին մեզ:

Եւ վերջապէս հասաւ բաժանումի պահը, որ եղաւ յուզիչ բոլորիս համար, սակայն կրկին հաղիպելու եւ գիրար տեսնելու յոյսը, հաւատքը եւ սպասումը մեզ խրախուսեցին եւ լաւատեսութեամբ տոգորեցին մեր սրտերն ու հոգիները:

Յրաժեշտ տուիւք իրարու՝ ընտանեկան հարազատ այս մթնոլորտին ջերմութիւնը, գեղեցկութիւնը եւ ուրախութիւնը վայելելէ ետք:

www.kantsasar.com

Պրիսմակետ

ՉԱՐԵԱՑ  
ԱՂԲԻԻՐԸ



Մարուշ Երամյան

21 Մարտին Միջին Արեւելքի մէջ Մայրերու տօնը ըլլալու կողքին, է նաեւ բանաստեղծութեան համաշխարհային օրը:

Արդեօք արձակի օր կա՞յ, կը մտածեմ. եթէ ըլլար, պիտի իմանայինք, իսկ եթէ չկայ, ինչո՞ւ չկայ: Արդեօք բանաստեղծութիւնը նահանջի մէջ է, այդ պատճառով անոր «օր» տրամադրուած է, որ գոնէ տարին մէկ օր մարդիկ յիշեն եւ անդրադառնան անոր:

Այս տրամաբանութեամբ ուրեմն պէտք է շատ «օրեր» ըլլան տարուան մէջ, որովհետեւ վերջերս այնքան բան նահանջի մէջ է, ինչպէս օրինակ՝ մարդկային սկզբունքներու օր, իրար օգնելու օր, բարիք կամենալու օր եւ այլն:

Այս մտմտութիւններուս մէջ էի, երբ ընկերային ցանցերէն մեկուն վրայ յօդուած մը աչքիս գարկաւ. անտուն կատուի մը մասին յօդուած մը, շատ լուրջ կերպով եւ խիստ սրտցաւութեամբ գրուած: Զոն կ'ըսուի թէ ամէն տարի, 12 ամիսներու ընթացքին 2,1 միլիոն անտուն կատուներ տուն կ'ունենան եւ փողոց մնալու դժխեմ ճակատագրէն կրնան փախչիլ: Կ'ըսուի նաեւ, որ ԱՄՆ-ի մէջ 60 միլիոն կատուներ անտուն են եւ յաճախ փողոցներու վտանգներուն կ'ենթարկուին. «Անպայմանօրէն պէտք չ'է կենդանասէր ըլլալ, տեսնելու համար թէ որքան ծանր է կացութիւնը այս կատուներուն համար»: Եւ, խնդրեմ,



կատուներն ալ օր ունին եղեր, 8 Օգոստոսը «կատուներու օր» է եղեր:

Կը մոռնամ նախկին ըսածներս՝ մարդկային սկզբունքներու օր, իրար օգնելու օր, բարիք կամենալու օր... Ուրեմն մարդ արարածը կատուի մը չ'ա՞րի ալ չ'կայ: Ժամանակին «Շունի կեանք»-ը անտուն-անտիրական, դժբախտ ըլլալ կը նշանակէր, յետոյ երբ շուները սկսան յարգ ունենալ եւ տուններ ու հոգատարութիւն, «Շունի կեանք»-ը այլ իմաստ ստացաւ: Զիմա կարգը եկեր է կատուներուն:

Բայց չ'է՞ որ մարդ արարածը ամէնէն բարձրն է կենդանական աշխարհին եւ անոր տիրակալը. ինչպէ՞ս ուրեմն շունն ու կատուն կ'անցնին առաջ, մարդը ետեւ ձգելով:

Ուրեմն ա՛յն է ամբողջ խնդիրը՝ աշխարհին տիրել, որպէսզի ոչ միայն իրենց ժողովուրդը, այլ եւ շուներու եւ կատուներու միլիոնաւոր բազմութիւնները արժանապատիւ կեանք մը ունենան:

Իսկ այն միլիոնաւոր երիտասարդները, որոնք փոքրիկ փամփուշտի մը կամ արկի մը գոհ կ'երթան, բոլոր այն կիները, որոնք իրենց տունները լքելով կը բռնեն գաղթականութեան ճամբան, բոլոր այն երեխաները, որոնք ծովերու մէջ խեղդամահ կ'ըլլան, ո՞վ կը մտածէ անոնց մասին, ո՞վ «օր» կը նշէ անոնց համար: Բայց մի՛ մոռնաք, մի՛ մոռնաք 8 Օգոստոսը, «Կատուներու օր»-ը:

Ժամանակը չ'է՞ արդէն «Գաղթականութեան օր» կամ «Գաղթականներու օր» ունենալու, հիմա որ բազմաթիւ երկիրներ դարձան գաղթականներու կամ գաղթականներ ընդունելու երկիրներ:

Ի՞նչ իմաստ ունի «օր» սակայն, եթէ տոնախմբութիւններէն ետք, յաջորդ օրն իսկ պիտի մոռնանք գայն եւ շարունակենք ընել ինչ որ կ'ընէինք մէկ օր առաջ: Ի՞նչ իմաստ ունի օր սահմանել, երբ այդ սահմանումը նաեւ լուծումներ պիտի չ'բերէ իր հետ, երբ վիճակը բարելաւելու ձեւեր պիտի չ'հայթայթէ:

Եւ բարկութիւնս մեղմելու համար կը փորձեմ ինքզինքս համոզել, որ ամէն բան կը սկսի «ամենայն չարեաց աղբիւր»էն, որուն դէմ կարծես աշխարհն իսկ անգօր է, հետեւաբար մեր բոլոր ճիգերն ալ անգօր կը մնան:

Բարեբախտաբար «Մայրերու օր»ուան շնորհաւորանքները կը մխիթարեն գիս, մանաւանդ երբ մատուցուած երիտասարդուհի մը իր եջին վրայ կը գրէ՝ «Մայրս օրի պէտք չ'ունի, մայրս ամէն օր սքանչելի է»:

Մայրերու օրէն աւելի, սակայն, գիս լաւատեսութեամբ պարուրողը Շիրակի Մարգային գրադարանի (Հայաստան) կազմակերպած սփիւռքահայ բանաստեղծութեան փառատօնն է, «Բանաստեղծութեան օր»-ին առիթով յայտարարուած: Զոն մէկ ծածքի տակ իրենց անուններով եւ ստեղծագործութիւններով հաւաքուած են Սփիւռքի 34 բանաստեղծներ (թէեւ մէկ քանի մոռացումներ եղած են), բոլորն ալ արեւմտահայերէնով ստեղծագործող:

Այս փառատօնը մէկ կողմէ եթէ լոյսին կը բերէ սփիւռքահայ ժամանակակից բանաստեղծութիւնը, - որ մեռած չ'է, հակառակ կարգ մը յոռետեսներու կարծիքին, - միւս կողմէ կարծես շնչելու վայր մը կ'ապահովէ

Շար.՝ Էջ 6

ՖՈՒԹԳՈՒԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ ՍՈՒՐԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ՝ ՀԱԼԷՊԻ ՀՄԸՄ-ԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱՏԻՆ ՄԻՋԵԻ

2.

Ճորճ Ռասսոկէլէնեան

Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ, 1964-ին, ներկայ էին խումներամ ՀՄԸՄ-ականներ, համակիրներ եւ օտարներ, որոնք դաշտ եկած էին վայելելու երեւանէն ժամանած Հայաստանի ախոյեան խումբի՝ Արարատի եւ Սուրիոյ ախոյեան խումբի՝ ՀՄԸՄ-ի եզակի հանդիպումը:

Մրցումը կը հովանաւորեր Հալէպի նահանգապետը:

Հայրենի խումբը, նախքան այս մրցումը, Լիբանանի եւ Սուրիոյ մէջ փայլուն յաղթանակներ արձանագրած էր եւ բարձր մակարդակի, տպաւորիչ խաղարկութիւն ցուցաբերած՝ հմայելով հանդիսականները:

Հալէպի ՀՄԸՄ-ի տղաքը եւս բացառիկ արդիւնքներ արձանագրած էին օտար խումբերու դէմ: Անոնք ոգեւորուած, քաջալերուած յուսադրիչ արդիւնքներէն, ինքնավստահ դաշտ ներկայացան՝ կրկին լաւագոյնը հրամցնելու բոլորին, յատկապէս յարգելով հայրենի խումբին համբաւն ու բացառիկ կարողութիւնը:



Երկու խումբերը դաշտ մուտք գործեցին առաջնորդութեամբ մրցումի գլխաւոր, միջազգային իրաւար Սալէմ Այմաշի եւ իր օգնականներուն:

Պետական գոյգ քայլերգներու ունկնդրութենէն ետք, երկու խումբերուն խմբապետները պաշտօնապէս ամպիոն բարձրանալով ծաղկեփունջեր նուիրեցին օրուան մրցումը հովանաւորողին՝ առ ի յարգանք եւ շնորհակալութիւն:

Երկու խումբերուն մարզիկները եւս իրենց ձեռքի փոքր ծաղկեփունջերով ողջունեցին բազմահազար ներկաները եւ արժանացան անոնց բռն ծափողոյններուն:

Իրաւարարի սուլիչին ազդանիշով մրցումը ընթացք առաւ: ՀՄԸՄ-ի տղաքը անցան լուրջ աշխատանքի, դարձեալ բացառիկ յաղթանակ ապահովելու առաջադրանքով: Կազմակերպուած, հաւաքական գործակցութեամբ, ներդաշնակ խաղարկութեամբ եւ ուսումնասիրուած յարձակումներով անոնք, բազմաթիւ անգամներ վտանգի ենթարկելէ ետք հայրենի խումբին բերդը, յաջողեցան, շնորհիւ Գրիգորի, Ճորճիկի եւ Գօգոյի արագ ու ճշգրիտ փոխանցումներուն, գնդակը ապահով հասցնել Արարատի մեծ քառակուսին, ուր Ճորճիկ՝ խաղի բերելէ

ետք յետսապահ գիծի խաղացողը, վարպետ խաղացող Գօգօ Քիլեճեանէն ստացած գնդակը յաջողեցաւ ճշգրտութեամբ հասցնել իր նպատակին՝ ցնցելով հայրենի խումբին բերդն ու բերդապահը, մրցումին 5-րդ վայրկեանին: Արդիւնքը եղաւ (1-0)՝ ի նպաստ ՀՄԸՄ-ին:

Այս կողմը ՀՄԸՄ-ի տղաքը ոգեւորեց:

Դաշտը կը թնդար բազմահազար ՀՄԸՄ-ականներու եւ համակիրներու ազգային, յեղափոխական բարձրաձայն երգերուն հնչեղութեամբ: Ոգեւորիչ այս երգերու կշռոյթին հետեւելով, ՀՄԸՄ-ի անման տղաքը շարունակեցին իրենց տպաւորիչ յարձակումները: Հայրենի խումբի խաղացողները ջանք ու ճիգ չ'խնայեցին հասնելու ՀՄԸՄ-ի բերդը, սակայն անոնց բոլոր գրոհները ձախողութեան մատնուեցան՝ շնորհիւ յետսապահ գիծի արթուն տղոց, որոնք հանդարտութեամբ, խոհեմութեամբ եւ վարպետութեամբ յաջողեցան կասեցնել բոլոր յարձակումները եւ անցնիլ կազմա-

կերպուած հակադարձակողականի: Անոնք արագ, ճշգրիտ փոխանցումներով մատակարարեցին յառաջապահ գիծի տղաքը, որոնք եւս տպաւորիչ եւ բարձր մակարդակի խաղ ցուցադրելով գերազանցեցին հայրենի խումբը:

Սուր պայքարը շարունակուեցաւ: ՀՄԸՄ-ի տղաքը կը ջանային յաղթանակով աւարտել այս մրցումը, մինչդեռ Արարատ խումբը ամէն գնով կը փորձէր նախ հաւասարիլ, ապա յաղթանակ ապահովել:

Մրցումի աւարտէն ութը վայրկեան առաջ, երբ տակաւին արդիւնքը կը մնար (1-0)՝ ի նպաստ ՀՄԸՄ-ի խումբին, պատահեցաւ անսպասելին: ՀՄԸՄ-ի հմուտ բերդապահը՝ եղբ. Անդրանիկ Սիւլիքճեան, երկու կողմը հրամցուց Հայրենի խումբին: Բոլորս շշմած մնացինք, ցնցուեցանք, չ'հասկցանք, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կը պատահի այս մէկը: Եղբ. Անդրանիկ առաջին անգամ ըլլալով խումբին պարտութեան պատճառը կը դառնար:

Բոլորս՝ խումբին տարրերը եւ դաշտի խումբներամ բազմութիւնը, չ'հաւատացինք եղածին: Սակայն մրցումէն ետք, շուտով հասկցանք, որ «Կարելի է ընդունելի չ'էր Արարատ խումբը պարտուած դրկել Հայրենի»:

Շար.՝ Էջ 6

## ՀԱՄԱԳՈՒՅԻՆ...

Սկզբը՝ էջ 1

Արդարեւ, Համագայինի Սուրբ Շրջանային Վարչութեան «Չուարթնոց» երգչախումբը, Կիրակի, 27 Մարտ 2022-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս իր ելոյթը սկսաւ Սուրբի եւ Հայաստանի հանրապետութիւններու գոյգ քայլերգներով:



Հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Մարիա Մոմճեան: Ան ըսաւ. «Ազգի մը գոյատեւումը իր դարաւոր մշակոյթի պահպանումով նաեւ կ'իրականանայ: Ուստի այն ազգը, որ մշակոյթ չունի, երկար չի կրնար գոյատեւել: Հայ ժողովուրդը մշակութեան արուեստներ ազգ է, իսկ երգը մշակոյթի մը անքակտելի օղակներէն ամենարտայայտիչն է, որ գեղարուեստական ներդաշնակութեամբ զգացումներ կ'արտայայտէ ու կը խորհրդանշէ խաղաղութիւն, պայքար եւ յաղթանակ»:

Արաբերէն բացման խօսքով Ռաֆֆի Սիլահեան ըսաւ. «Հալէպ

Սուրբի վսեմաշուք նախագահ Պաշտարալ Ասատը, Սուրբի անկախութեան տօնին առիթով, Սուրբական Հայրենիքին մաղթելով յաղթանակ եւ բարգաւաճում»:

Այնուհետեւ «Չուարթնոց» երգչախումբը յայտագիրի Ա. բաժինով յաջորդաբար ներկայացուց՝ «Ո՛ր մեծաքանի Դու Լեզու», երժշտ. Կոմիտաս, «Հիմի Էլ Լռենք», երժշտ. Կոմիտաս, «Դաւիթ Բէկ» (Օփերային բաժին), երժշտ. Ա. Տիգրանեան, «Պինկեթ» (ժողովրդական), մշկ. Չուլալ, «Սիրոյս Կը Սպասեմ», երժշտ. Խ. Աւետիսեան, «Dimine Jesu», «Sanctus» եւ «Dies irae» Սոցարոյի եւ «Վալս - Դիմակահանդէս», երժշտ. Ա. Խաչատուրեան: Իսկ Բ. բաժինով երգչախումբը յաջորդաբար ներկայացուց՝ «Պիլատի», մշկ. Սալէմ Պալի, «Շուֆու Պալատի», բանաստեղծութիւն՝ Սաֆուի Շադղալէ, երժշտ. Սամիր Զուլէֆաթի,



«The Cuckoo» երգը, որուն մայեսթրային ինտրանսով, հանդիսատեսը եւս մասնակից դարձաւ ծափ տալով՝ պահելու համար երաժշտութեան կշռոյթը, «Օտարութիւն» երժշտ. Գ. Պաղտասարեան, «Իլիկ

տագետ Ա. Կարապետեան սրտի իր խօսքը նամակով ուղղած էր

խումբին կատարումին ընդմէջէն: Խումբը, հետեւելով մայեսթրայի



շարժումներուն, ճկունութեամբ կը կատարէր մեղեդիներու ելեւէջներն ու կը պահպանէր ձայներու ներդաշնակութիւնը:

Դաշնակահար Լիզա Սերայտարեան-Արնեան կ'ամբողջացներ խումբին յաջողութիւնը դաշնամուրի գեղեցիկ ու հնչեղ ընկերակցութեամբ:

«Չուարթնոց» երգչախումբին, փոխանցելով իր ողջոյնները, բարեմաղթութիւնները եւ ելոյթին ներկայ ըլլալու բուն փափաքը:

Կարգ մը երգերու ընկերակցեցան նաեւ Համագայինի Ն. Արքայեան մասնաճիւղի «Սարդարապատ» պարախումբի անդամները, ղեկավարութեամբ գոյգ պարուսոյցներ՝ Մարալ Ղազարեանի եւ Նարոտ Պարսումեանի:

Խմբավարին մասնագիտական բժախնդրութիւնը կ'արտացոլար



«Չուարթնոց» երգչախումբի երկրորդ ելոյթը տեղի պիտի ունենայ Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս:



ճանչցուած է, որպէս մշակոյթի, արուեստի եւ երգի սիրաբարձը, նշանաւոր է յատկապէս հալէպեան «Զտուտ»-ը եւ «Մուշահաթ»-ը: Հալէպի մէջ հայերս ալ երգով եւ արուեստով յաջողեցանք յաղթահարել պատերազմի դժուարին պայմանները: Պատերազմի տարիներուն, «Չուարթնոց» երգչախումբը շարունակեց բեմ բարձրանալ եւ ժողովուրդին մասամբ մը հեռացնել պատերազմի սարսափազդու մթնոլորտէն»: Ապա ան «Չուարթնոց» երգչախումբին անունով շնորհաւորեց

ներով Պար», երժշտ. Խ. Աւետիսեան, «Հայաստան Իմ Չքնաղ», երժշտ. Ա. Գրիգորեան, «Փառք Մեր Ազգութեան», երժշտ. Կ. Օրբելեան, «Հայ Հոգին», խօսք՝ Մ. Իշխան, երժշտ. Ա. Կարապետեան:

Եզրափակիչ «Հայ Հոգին» երգին երաժշտութիւնը մշակած էր Արմենուհի Կարապետեան, որ նուիրած էր «Չուարթնոց» երգչախումբին: «Չուարթնոց» երգին առաջին քառաձայն կատարումը ներկայացուց տոյն իր այս ելոյթին:

Իր կարգին, հայրենի արուես-

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Շահմիրեան, Սթամպուլեան, Պազըրճի, Գաբրիէլեան եւ Հալապ ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հօր, եղբոր եւ մօրեղբոր՝



### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ՇԱՀՄԻՐԵԱՆԻ

մահուան սուգին, որ պատահեցաւ 18 Փետրուար 2022-ին, Ֆրանսա: Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլլաներ - Հալէպ:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

### Հանգուցեալ ԱՐՇԱԼՈՅՍ ՄԱՉԼՈՒՄԵԱՆ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլլաներ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնաբահէն ներս:



## ՄԻՐՈՒՆ ԳԱՐՈՒՆ ԻՆՉՈՒՒՆ ՈՒՇԱՅԱՐ



Սեան Ա. Մանուկյան

Քեսապի բնութեան գիրկը պիտի ապրիս, որ տարուան չորս եղանակները լիովին վայելէս: Քեսապի մէջ բնութեան դէմ յանդիման, չորս եղանակներու երեք ամիսներուն գունափոխումներով իւրայատուկ համ ու հոտ կը վայելէ: Ո՛չ պատշգամները երկինքն ու արեւը քողարկող երկար վարագոյրներ ունին, ո՛չ ալ բարձր շէնքերը կողք-կողքի շարուած բնութեան հմայքը կը ծածկեն:

Գարնան եղանակին բնութեան վերականգնումը կը վայելէս, ուրախ ու գուարթ տրամադրութեամբ: Երբ արեւը հետզհետէ իր դիմագիծը ցոյց կու տայ, արձակած իր շողերուն տաքութիւնը կը շերմացնէ քեզ: Դաշտի խոտերն ու բոյսերը կը սկսին աճիլ, դաշտերն ու պարտեզները ծաղիկներով կը լեցուին: Անոնք շուտով հասակ կ'առնեն ու օրէ օր կը մեծնան: Թըռչուններուն ճլլոցն ալ այնքան հաճելի կը հնչէ, որ կարծէք գարնանային մեղեդիներ համանուագ մը կ'անմահացնեն, առանց հեղինակի ու հասցի:



Նշենիները, ծիրանիները եւ սալորենիները կարգով կը ծաղկին, մերթ ճերմակ, մերթ վարդագոյն ծաղիկներով՝ հարսի հագուստով կը պճուին:

Ամառը նուազ գեղեցկութիւն չունի: Չքոսաշրջիկներ կը շտապեն գով ու բարեխառն կլիման վայելելով հանգիստ քուն մը քնանալու: Մինչդեռ քեսապցիներն

ամառը վայելելու առիթ չունի, իր բազմազան բարոյութեան պատճառով: Այստեղ տեղացիներէն յաճախ կը լսես «Ամառը քեսապցիին չէ, այլ՝ զքոսաշրջիկներուն» արտայայտութիւնը, որովհետեւ քեսապցի պարտեզի գործերով կլանուած կ'ըլլայ, սակայն այդ աշխատանքն ալ իւրայատուկ հաճոյք ունի:

Աշունը քեսապցիին ոսկի եղանակն է: Թագաւորաց թագաւորն է, Արքայից արքան: Պարտեզներու մէջ խնձորի ամեն մէկ ծառ տոնածառի նման գարդարուած կ'ըլլայ կարմիր ու դեղին, սիրուն խնձորներով: Անոնք կողքին որթատունկերուն բերքը կը հասնի ու դեռ բոլոր միրգերն աշունի նուռն ու թուզը եւ... իսկ երբ պարտիզպանը պարտեզի աշխատանքներուն լծուած, շապիկին ծայրով իր ճակտին քրտինքը սրբէ, գմայլած իր ամբողջ տարուան աշխատանքին արդիւնքը կը վայելէ:

Ա՛խ աշուն ջան՝ ցաւդ տանիմ...

Ա՛խ ոսկի աշուն, ինչո՞ւ տարին երկու անգամ չես այցելեր:

Ձմեռը՝ աշունը ճամբայ դնելով, այս անգամ ինք կը բազմի եղանակներու աթոռին: Իր պաղով, փայլատակումով, որոտումով եւ անձրեւով, իսկ երբեմն հաճելի, սպիտակ ձիւնով:

Ձմեռը վերջին տասնամեակին իբր զքոսաշրջիկ կ'այցելէր Քեսապ: Ան պգտիկ ճամպրուկով կ'այցելէր: Պարտեզներուն ծարաւը չէր յագենար, ջրհորները ձմրան անձրեւներով չէին պարարտանար:


Իսկ այս տարի ձմեռը մեծ ճամպրուկ մը շալկած հասաւ, թէւ ուշացած: Արդե՞ք ուշացումին պատճառը ճամպրուկին ծանրութիւնն էր, գորքաքշելով հագիւ Քեսապ հասաւ, կամ Քեսապը լեռնային շրջան ըլլալուն, դժուարութեամբ վեր բարձրացաւ... թէ պարզապէս պարծենալ ուզեց իր սպիտակ հագուստներով եւ ձիւնածածկ շղարշներով: Նոյնիսկ Ս. Յակոբի տօնին Կասիոսը ձիւնով չծածկուեցաւ, մինչդեռ քեսապցիներ քաջ գիտեն, որ այդ տօնին «Կասիոս լեռան մօրուքը սպիտակ կը դառնայ», այսինքն՝ լեռը ձիւնով կը ծածկուի:

Այդ շրջանին պաղը դժուարութեամբ կրցաւ ջերմաստիճանի սնդիկը վար իջեցնել: Բայց ձմեռը ըսաւ. «Ուշ լինի նուշ լինի», անձրեւը եւ պաղը ուշացան, բայց երբ հասան աննախադէպօրէն սաստկացած էին: Անշուշտ քեսապցի մրջիկներու նման աշնան պատրաստած էր ձմրան տաքնալու համար դիզուած իր փայտերը:

Ու ձմեռն այս, անգամ մը, որ չորս եղանակներու աթոռին բազմեցաւ, չուզեց գիշիլ իր տեղը գարնան: Մարտ ամիսը, որուն մասին այնքան ասացուածքներ յօրինուած էին, այս տարի տարբեր եղաւ: Մարտը՝ տարիներու ընթացքին խենթ կոչուած էր, մէկ արեւ-մէկ անձրեւ, այս տարի խելագարեցաւ, ու օր մը ձիւն, օր մըն ալ շատ ցուրտ ու կարկուտ: Ա՛խ գարուն ջան, սիրուն գարուն ինչո՞ւ այդքան ուշացար: Քաջ գիտեմ, որ Քեսապի ճամբան շատ լաւ գիտես, հապա ո՞ւր մնացիր...: Տէր Աստուած տարուան չորս եղանակներուն խելքը գլուխը բեր: Տաքնալու համար հաւաքուած փայտերը սպառեցան, տաքուկ արեւի շողերը կարօտցանք, իսկ փոքրիկները կարօտցան այն օրերը, երբ տունէն դուրս պիտի ելլեն ու իրենց մընընկիւմատներով գարնան ծաղիկները քաղեն ու փըն-

## Երիտասարդական Ոսպնեակ

### ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԲՈԼՈՐԻՍ ԿԵԱՆՔԷՆ



Վեհան Գաբումյան

Վարագոյրը փակուեցաւ: Բոլորը ծափահարեցին: Ներկայացումը վերջ գտաւ: Վարագոյրը բացուեցաւ: Բոլորը ծափահարեցին: Դերասանները մէկ-մէկ խոնարհեցան: Ծափահարեցին: Բեմադրիչը բեմ բարձրացաւ, խոնարհեցաւ: Ծափահարեցին:



Բոլորը տուն վերադարձան: Մոռցան ներկայացումը: Չմոռցան դերասանները...: Ուզեցին կապել գիրենք: Յաջողեցան: Եւ բոլորը մէկ եղան դերասան: Դերասան, այո՛, ոչ թէ ստախօս եւ կամ ծաղրածու: Դերասանները ստախօս կամ ծաղրածու չեն: Անոնք պարզապէս իրենց վստահուած դերը կը կերտեն: Այո՛, կը կերտեն ինչպէս գծագրիչ մը կտաւ կը կերտէ կամ բանաստեղծ մը՝ բանաստեղծութիւն:

\*\*\*

- Լռէ՛:
- Մի՛ պատասխաներ:
- Ամօթ է:
- Յարգէ՛:
- Ոտքի ե՛լ:
- Մէկը կարծիքդ չհարցուց:
- Մի՛ խառնուիր:

#### ՏԱՍ ՏԱՐԻ ԱՆՑ...

- Ինչո՞ւ չես խօսիր:
- Յաճիս պատասխանէ՛:
- Արտայայտուէ՛:
- Կարծիքդ տո՛ւր:
- Խօսէ՛:
- Բան մը ըսէ՛:
- Ձայնդ հասցո՛ւր:

**Ծանօթ: Բոլորն ալ կարծիք ունին, բայց սիրելիներ՛րս, դուք էիք զանոնք անտեսողը: Հիմա ալ անոնք ձեզ կ'անտեսեն:**

\*\*\*

Եւ ես հասկցայ, որ բոլորս մեկական անձնատերեր ենք: Մեկական անսիրտ մարդիկ, անտարբեր: Մեր ուզածն ի՞նչ է: Մենք ալ չենք գիտեր: Միայն կ'ուզենք, որ ըլլանք յատուկ այս միօրինակ աշխարհին վրայ: Միայն կ'ուզենք, որ ուրիշը մեզի նախանձով նայի: Նոյնիսկ մենք մեզ համոզեր ենք, որ այսինչ կամ այնինչ անձը անկասկած մեզ կը նախանձի: Այսինչ կամ այնինչ անձն ալ անկասկած կը մտածէ, որ իրեն կը նախանձինք: Մեր ուզածն ի՞նչ է: Մենք ալ չենք գիտեր:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

*Գույումեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝*

#### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

#### ՅԱՐՈՒԹ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

*մահուան սուգին:*

*Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալեպ:*

*Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին ԱՄՏ Տան «Նիւ Սպիտակ» ճաշասրահէն ներս:*

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

#### Հանգուցեալ

#### ՊԵՏՐՈՍ ՉԱԼՕՂԼԵԱՆԻ

*Հանգուցեալի մահուան Գ. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Հայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալեպ:*

## Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### ԽՈՅ

Աշխատանքային գործուղում մը մեծ փորձառության ձեռք ձգելու առիթ է: Հետեւաբար նման առաջարկ մը ստանալու պարագային փորձեցէ՛ք չմերժել գայն:



### ՅՈՒԼ

Այս շաբաթ կարելոր իրադարձութիւն մը պիտի օգնէ ձեր անձնական կեանքին մէջ նոր էջ բանալու: Ձեր ցանկութիւնները իրականանալու ճամբուն վրայ են:



### ԵՐԿՈՒՐԵԱԿ

Արկածախնդրական սիրավեպ մը պիտի ունենայ այս շաբաթ: Ձեզի առիթ պիտի տրուի հանդիպում մը ունենալու ձեր սիրելի անձնաւորութեան հետ:



### ԽԵՅՁԵՏԻՆ

Այս շաբաթը լեցուն պիտի ըլլայ ուրախութեամբ եւ ընկերային հաճելի հանդիպումներով: Ուրախ անակնկալները ձեզի կը սպասեն:



### ԱՌԻՄ

Չգո՛րջ: Շատեր կը փորձեն օգտագործել ձեզ ձեր կարողութիւններուն համար: Մի՛ հաւատաք ըսի ըսաւներու: Հոգ տարէ՛ք ձեր առողջութեան:



### ԿՈՅՍ

Այս շաբաթ գործի մը մէջ որոշ փոփոխութիւններ մտցնել պիտի պահանջէք: Պիտի յաջողից յաղթահարել բոլոր դժուարութիւնները ձեր աշխատասիրութեան շնորհիւ:



### ԿՇԻՈՔ

Համբերատար եղէ՛ք, որ վատ քայլերու չդիմեք: Ամուսնական կեանքին մէջ երբեմն գիշում եւ զոհողութիւն պէտք է: Օգտագործեցէ՛ք ձեր կշռադատող տրամաբանութիւնը:



### ԿԱՐԻՃ

Գործի մէջ ձեզի պիտի ընծայուին շահաբեր առիթներ, որոնցմէ պիտի օգտուիք: Համբերող եւ ինքնավստահ եղէ՛ք, ձեր տրամադրութիւնը բարձր պահեցէ՛ք:



### ԱՂԵՂԱՊՈՐ

Շատ շղագրգիռ դարձած էք տնտեսական ծանր պայմաններուն պատճառով: Փորձեցէ՛ք կարելի եղածին չափ հանդարտ մնալ եւ անտեսել անկարելոր խոչընդոտները:



### ԱՅՇԵՂՁԻՐ

Պէտք է ձեր դիրքը ճշդէք եւ նոր կեցուածք որդեգրէք ձեր ընկերութեան մէջ, որպէսզի նիւթական գետնի վրայ յաջողութիւններ արձանագրէք:




### ՋՐԴՈՍ

Փորձեցէ՛ք ձեր մտերիմներուն հետ երկար ժամանակ անցընել: Ոչ միայն ձեր մտերիմները, այլ նաեւ դուք պէտք ունիք անոնց ընկերակցութեան այս օրերուն:



### ՋՈՒԿ

Ձեր տեսակետը մի՛ պարտադրէք ուրիշներուն վրայ, որովհետեւ այլ կարծիք ունեցողներ կրնան ըլլալ:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՈՐԱՁԵԽՈՒԹԻՒՆ



Գարուն է արդէն: Գեղեցիկ այս եղանակը իր հետ կը բերէ նորաձեւութիւն՝ ոճի եւ գոյներու համադրութեան:

Այս գարնան հագուստի նորոյթն է պարզ առօրեայի եւ դասականի համադրութիւնը: Մարդիկ կը նախընտրեն յարմարաւետութեան ու գեղեցիկի համադրումը:

Անդրադառնալով գարնանային 2022-ի գոյներուն, կրնանք ըսել որ կապոյտի երանգները, կանաչը, ճերմակը, սեւը, ինչպէս նաեւ դեղինը տիրող գոյներն են այս գարնան:

Հիմնական նորոյթը՝ երկար ծոպերն են: Աշխարհահռչակ «Dior»-ը, « Alberta Ferretti»-ին, «Salvatore Ferragamo»-ն կ'առաջարկեն ծոպերու գործածութիւնը զգեստներու վրայ:

Այս եղանակին նորոյթ է նաեւ լայնափողոց տաբատներ, այս լայն տաբատները կը համադրուին *քոստիւմ*ներու պարագային ալ, բաց գոյներով:

Նորաձեւ կը համարուին փայլփլուն հագուստներ, նաեւ մետաղի փայլքով զգեստներ:

Ժանտակները (կիւփիւռ) դարձեալ նորոյթ են: Անոնք այս տարուան գլխաւոր տեղը կը գրաւեն մանաւանդ՝ ճերմակ ժանտակները:

Լայնածաւալ հագուստները, անշուշտ նիւթակազմ կիւներու համար, կը ներկայացնեն նրբութիւն եւ իզակակութիւն:

Իսկ հագուստներու կտրուածքները աւանդական կտրուածքներով չեն սահմանափակուիր, ձեւագետներ կ'առաջարկեն նոր տարբերակներ: Ինչպէս օրինակ V-ձեւով կտրուածքը կ'ընդունի քառակուսի կտրուածքներու փոխարէն, գործածական են նաեւ անսովոր ձեւեր կրող լանջաբացուածքները, աւելի գրաւիչ ըլլալու նպատակով:

Ցած գօտատեղիով ճիւղերը եւս պիտի ընդհանրանան: Այս տաբատները երկար ընդմիջումէ ետք կրկին նորաձեւութեան գագաթնակէտին յայտնուած են:

Ձեւագետները խորհուրդ կու տան այս տաբատները հագնել կարճ գագակներով:

Այս եղանակի գլխաւոր նորոյթը կարճ շրջագգեստներն են:



Այս եղանակին պէտք է ընտրել դեղինի եւ մանիշակագոյնի բոլոր երանգներով պատրաստուած հագուստները, որոնք ձեր գեղեցկութիւնն ու մարմնի բնական գոյնը կ'ընդգծեն: Կանանց հագուստները պէտք է ունենան վառ գոյներով բացուած գարնանային ծաղիկներ:

Ձեւագետներ առատ փետուրներով ձեւաւորած են ո՛չ միայն հագուստները, այլեւ արձաթեայ կամ այլ գարդերը: Եթէ մտավախութիւն ունիք, որ չէք կրնար փետուրով հագուստը համադրել այլ իրերու հետ, կրնաք փետուրով գլխարկ կամ փետուրով գարդարուած պայուսակ օգտագործել:

Նորոյթ է նաեւ ուսերուն ամրացուող ապարանջանները, որոնք գարդարանքի հետաքրքիր տարրեր են:

Իսկ կօշիկներու պարագային նորոյթ են՝ սանտալները եւ *բոկոստները*՝ բարձր կշռուկներով, յատկապէս կանաչ եւ կապոյտ գոյներով:

**ՀԱՅ ԲԱՆԱՍԵՐԾՆԵՐԸ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ**

**ՄԱՐԳԱՐԻՏՆ ՈՒ ՓՐՓՈՒՐԸ**

*Յովհաննէս Շիրազ*

Ծովի երեսն է փրփուրը ելնում,  
Փայլփլում մի պահ, իբր մարգարիտ,  
Մինչ մարգարիտը խորքում է լինում,  
Խորից է ծնում գանձը ճշմարիտ:

Բայց այսպէս խօսեց փրփուրն այդ մասին.  
-Ինչո՞ւ տեղ չունես ծովի երեսին,  
Թէ մարգարիտ ես... Էլ ի՞նչ մարգարիտ,  
Ես եմ մայր ծովի գանձը ճշմարիտ,  
Որ միշտ ջրերի երեսն եմ ելնում,  
Ու ես եմ փայլում,  
Կեանքը վայելում....

Բայց իր վայելքը երկար չտուեց,  
Մի քամի էլաւ, փրփուրը ցրուեց,  
Հետքն էլ չմնաց ծովի երեսին...  
Մինչ մարգարիտը, երբ խորքից հանուեց,  
Ձեռքէ ձեռք խլուեց, գանձ է, գանձ, ասին,  
Ահա՛ մայր ծովի միակ փառքը մեծ:  
... Մարդիկ կան, որոնք փրփուրի նման  
Միշտ կեանքի ծովի երեսն են ելնում,  
Բայց խորքում որքա՛ն Մարգարիտներ կան,  
Որոնք փառքը դեռ փրփուրն է խլում:



Ռաֆֆի Սիլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ ֆութպոլի հաւաքականը Լիբանանի Սայտա քաղաքին մէջ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց հիւրընկալ Լիբանանը: Հաւաքականի երեք կոլերը նշանակեցին Ալաա Տալի, Մարտիկ Մարտիկեան եւ Մուհամմետ Մարմուր: Հանդիպումի 70-րդ վայրկեանին, իրաւարարը դադրեցուց հանդիպումը եւ հեռացուց ներկայ ժողովուրդը, որմէ ետք կրկին ընթացք առաւ հանդիպումը:



- Սուրիոյ պասքեթի աղջկանց Ս 19-ի պիւնյեանութեան աւարտին, Դամասկոսի Ուահտէն տիրացաւ տիտղոսին, աւարտական մրցումին 66-97 արդիւնքով պարտութեան մատնելով Հալէպի ճալաաը: Սոյն մրցաշարքին Ուահտէն խաղցաւ 19 մրցում եւ յաղթական աւարտեց բոլորը՝ նշանակելով 1343 կէտ:

- Պասքեթի տղոց Ս 19-ի մրցաշարքին, Ճէյժի տղոց կազմը ձեռք ձգեց պիւնյեանութեան կոչումը՝ աւարտական մրցումին պարտութեան մատնելով Ուասապէն 60-57 արդիւնքով: Սոյն մրցաշարքին Ճէյժը խաղցաւ 21 մրցում, որոնցմէ 18 հանդիպում աւարտեց յաղթական:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ԻՏԱԼԻԱՆ ԴՈՒՐՍ ՄԵԱՑ ՀԱՄԱՇԽԱՐԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Իտալիոյ ֆութպոլի պատմութեան մէջ Իտալիան երկրորդ անգամ անընդմէջ դուրս կը մնայ համաշխարհային ֆութպոլի 2022-ի մրցումներէն, որոնք տեղի պիտի ունենան Քաթարի մէջ: Ընտրական Փլէյ Օֆի հանդիպումին Իտալիան 1-0 արդիւնքով զիջեցաւ Մակեդոնիային: Այսպիսով Ռուսիոյ Մանչեսթրի գլխաւորած խումբը երկրորդ անգամ ըլլալով հեռու մնաց համաշխարհային մրցաշարքէն: 2017-ին Իտալիան անցումային հանդիպումներուն պարտուած էր Շուէտի հաւաքականէն (0 - 1, 0 - 0) արդիւնքով, որուն պատճառով ան դուրս մնաց Ռուսիոյ մրցաշարքէն:



### ԱՇՐԱՑ ՀԱՔԻՄԻՆ Կ'ՈՒԶԷ ԲԵՈՎՆԱԼ ՓՈՐԻՉԵԱՆ ԽՈՒՄԲԸՆ

Ֆրանսական Փարիզ Սան ժերմանի 23-ամեայ պաշտպան Աշրաֆ Հաքիմի փափաք ունի ամրան փոխել իր ակումբը: Ըստ ֆրանսական մամուլի RMC Sport-ին, պատճառը փարիզեան ակումբին մէջ տիրող անառողջ մթնոլորտն է, ինչպէս նաեւ հարաւամերիկացի եւ ֆրանսախօս ֆութպոլիստներուն միջեւ լարուած յարաբերութիւնները: Մարոքցի Հաքիմին լաւ յարաբերութիւններ ունի ֆրանսացի յարձակող Քիլիան Միսթրալիի հետ, որ արդէն կը պատրաստուի ամրան տեղափոխուիլ Ռեալ Մատրիտ:



Աւելցնենք, որ Հաքիմի անցեալ ամրան միացաւ ֆրանսական ակումբին փոխան 60 միլիոն եւրոյի: Ան նախապէս մաս կը կազմեր Իտալիոյ Միլանին:

### ՃՈՒՏ ՊԵԼԻՆԿՅԱՄ ՊԱՅԱՆՁՈՒՄԸ Ե ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԻՆ ԿՈՂՄԵ

Ըստ Goal.com-ին, Սպանիոյ մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը հետաքրքրուած է Անգլիոյ հաւաքականի եւ Պորիսիա Տորթմոնտի 18-ամեայ կիսապաշտպան Ճուտ Պելինկիամի ծառայութեամբ: Անոր ձեռք բերելու ցանկութիւն յայտնած են եւրոպական այլ ակումբներ, սակայն Պորիսիան մտադիր է առաջին հերթին բանակցիլ արքայական ակումբին հետ: Գերմանիոյ ընթացիկ առաջնութեան Պելինկիամ մասնակցած է 25 հանդիպումի եւ նշանակած է 3 կոլ:



### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 384)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1			■									
2		■				■			■		■	
3			■					■				
4	■			■						■		
5								■			■	
6	■		■			■						
7				■				■				
8					■					■		
9											■	
10				■			■					
11	■									■		
12							■					■

#### Հորիզոնական

1. Լեցուն: Չօրագունդ:
2. Յերեկ օր: Եւս:
3. Տարի: Թուր: Անգօր:
4. Տարածքի միաւոր: Արական կոչական բառ: Ճափոնական թատրոն:
5. Մոլորակ մը:
6. Բայական լծորդութիւն: Ամենէն առաջ:
7. Աշակերտ: Հակառակ՝ տառի մը անունը:
8. Թաքուն պայթուցիկ: Արական անուն: Հակառակ՝ յարաբերական դերանուն:
9. Անձուկ, նեղ:
10. 4401: Հակառակ՝ աղբիւր: Սրատես:
11. Պատկեր: Կրկնուած ձայնաւորներ: Ձայնաւոր տառեր:
12. Մեծ Պահիքի կէտը: Տնտեսական տազնապ մը:


#### Ուղղահայեաց

1. Իգական անուն: Յանդիմանութիւն:
2. Կռուող, պայքարող:
3. Հակառակ՝ յարաբերական դերանուն: Ընկրկում:
4. Արժեք: Հակառակ՝ տառի մը դրացիները: Հակառակ՝ փոքրացնող մասնիկ:
5. Հարցական դերանուն: Կաթի երեսի իւր: Թաքուն պայթուցիկ:
6. Խորշիլ: Ճար, միջոց:
7. Իգական անուն: Արական անուն:
8. Եւս: Սիամանթոյի ծննդավայրը: Աւաղ:
9. Իրերայաջորդ տառեր: Անճարակ:
10. Նոխազի կարուած կաշի: Ցաւի ճիչ: Հակառակ՝ աղբիւր:
11. Անձնական դերանուն: Եական բայ: Մատնուկ:
12. Վիզէն Գլակի բուն անունն ու որպէս առաջին ծածկանուն գործած մականունը:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 383)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	կ	ա	ր	թ		կ	ի	ր		ս	ա	զ
2	ա	ն		ա						ս	յ	ա
3	մ	ն	ա	ց	ո	ր	դ	ա	ց		ո	ւ
4	ք	ա	ղ	ա	ք	ա	կ	ի	թ	թ		ա
5	ն		ա	ն		ւ	ո		ո	ճ	ի	ր
6		ա	պ		ի	ա	ւ		ւ	կ	ե	
7	ա		ա	ս		ն	ղ		ի	ա		ա
8	հ	ա	տ	ե	ւ				ւ	մ	ա	ն
9	ե	ր	ա	զ		ա	ս	ր		ր		
10	կ	ա	ն	ա		հ	ա	յ	ո	ր	դ	ի
11	ա		ք		ե	ն	ո	ս	ի	ն		
12	ն	2		կ	ո	ղ	ա	կ		ա		ի

ԼՈՒՐԵՐ



## ԱՉՊԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԳՈՒՄԱՐՈՒԵՅԱԲ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՈԳԵՒՐ ՊԵՏԵՐՈՒ ՇԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շաբաթ, 26 Մարտ 2022-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի նախագահութեամբ եւ հիւրընկալութեամբ Ազգային Առաջնորդարանի դահլիճէն Ներս գումարուեցաւ քրիստոնէայ Յոգեւոր Պետերու հերթական ժողովը, որուն ներկայ գտնուեցան քրիս-



տոնէայ համայնքներու Յոգեւոր Պետերը, իրենց օգնականներուն ընկերակցութեամբ: Սրբազան Յօր կողքին ներկայ էր Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեան:

Ժողովը ընթացք առաւ աղօթքով եւ ողջոյնի խօսքով:

Ժողովին արծարծուեցան համայնքները յուզող օրակարգային գանձազան հարցեր:

Ժողովականները անդրադարձան անցնող օրերուն Դամասկոսի մէջ Կաթողիկէ եկեղեցիներու Խորհուրդին կողմէ գումարուած «Եկեղեցին Սիրոյ Տուն» խորագիրը կրող եկեղեցական-միջազգային ժողովին, որ իր տարողութեամբ առաջին անգամ տեղի կ'ունենար Սուրիոյ մէջ:

Ժողովականները արծարծեցին նաեւ ներկայիս տիրող տնտեսական ծանր իրավիճակը եւ համայնքներուն դիմագրաւած մարտահրաւերները:

Սուրբ Յարութեան տօնի նախօրեակին, համայնքապետները եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ բարեմաղթութիւններ փոխանակեցին իրարու:

## ՍՐԲՈՅ ԲԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՌԱՍՈՒՆ ԼԱՊՏԵՐՆԵՐԸ ԼՈՒՍԱԽՐՈՒԵՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒ ԶՆՈՒՄԲ

Սրբոց Բառասնից Մանկանց տօնի նախօրեակին, Շաբաթ, 26 Մարտ 2022-ին, յետ Ազգային Առաջնորդարանէն Ներս գումարուած Յալէպի քրիստոնէայ համայնքապետներու հերթական ժողովին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի նախագահութեամբ եւ հրաւերով, քրիստոնէայ համայնքապետները Սեբաստիոյ քառասուն գօրականներու նահատակութեան նուիրուած խորանին առջեւ մասնակից դարձան քառասուն լապտերներու լուսաւորումի արարողութեան, Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, առ ի պատրաստութիւն եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին: Արարողութեան ներկայ էին նաեւ Թեմի Զահանայ Յայրեր, եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը եւ Տիկնանց Յանձնախումբը:



Առաջնորդ Սրբազան Յայրը խորանէն բերուած լոյսով առաջին լապտերը լուսաւորեց, ապա համայնքապետները յաջորդաբար բոլոր լապտերները լուսաւորեցին, եղբայրական եւ սիրոյ մթնոլորտի մէջ հայցելով Սրբոց Բառասնից Մանկանց բարեխօսութիւնը:

Այնուհետեւ, պատմական եկեղեցւոյ օրհնաբեր կամարներուն ներքեւ, համայնքապետները միասնաբար «Տերունական Աղօթք»-ը արտասանեցին, հայցելով Ամենակալին օրհնութիւնն ու պահպանութիւնը:

## ՍՐԲՈՅ ԲԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՊԱՏԱՐԱԳՈՎ ՅԻՇՆԱԿՈՒԵՅԱԲ

Սրբոց Բառասնից Մանկանց տօնը յիշատակութիւնն է չորրորդ դարու սկզբնաւորութեան քրիստոնէական հաւատքին համար նահատակուած Յայոց Սեբաստիա քաղաքի քառասուն երիտասարդ զինուորներուն, որոնք հռովմէական բանակէն Ներս խիստ հարցաքննութեան ենթարկուելով կը մերժեն աստուածները պաշտել եւ իրենց հաւատքին վրայ հաստատուն մնալով կը նահատակուին:

Յալէպի Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցին, որ կը գտնուի «Ճտէյ-տէ»ի «Սալիպէ» կոչուած թաղամասին մէջ, կը կրէ քառասուն սրբացեալ նահատակներուն անունը, կառուցուած է այժմու եկեղեցւոյ Ս. Մատրան տարածքին դէպի արեւմուտք փոքրիկ ընդլայնումով, 1499-1501 թուականին, հալէպաբնակ Շահի Յիսէի կողմէ: Յետագային ընդարձակուած եւ քանիցս վերանորոգուած է, վերջինը՝ յետ պատերազ մին: 30 Մարտ 2019-ին վերանորոգուած եկեղեցւոյ սրբագործումն ու վերօծումը կատարուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին ձեռամբ:



Սրբոց Բառասնից Մանկանց տօնի նախօրեակին, նախագահութեամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի եւ մասնակցութեամբ՝ Յալէպի քրիստոնէայ Յոգեւոր Պետերուն, սիրոյ եւ եղբայրական մթնոլորտի մէջ Սրբոց Բառասնից Մանկանց խորանին առջեւ տեղադրուած քառասուն լապտերները լուսաւորուեցան, հայցելով սրբացեալ քառասուն նահատակներուն բարեխօսութիւնը:

Կիրակի 27 Մարտ 2022-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի նախապատրաստութեամբ Սրբոց Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Յալէպի Սրբ. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ: Ներկայ էին Սուրիոյ մօտ Կիպրոսի Դեսպանի Գործակատար տիար Սեւակ Աւետիսեանը եւ իր մայրը, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան Խումբի Գնդապետ Արմէն Աւագեանը, Գնդապետ Կարէն Մուրատեանը, խումբի մասնագետներ, Ազգային Վարչութեան անդամներ, եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը, Աղքատախնամ կազմը, Տիկնանց Յանձնախումբը եւ մեծաթիւ հաւատացեալներ:

Սրբազան Յայրը «Յրաշափառ» շարականի երգեցողութեամբ, թափօրով մուտք գործեց եկեղեցի, ուր պատմական մատրան առջեւ աղօթք մատուցեց, այնուհետեւ բարձրացաւ Սուրբ Խորան եւ եպիսկոպոսական հանդիսաւոր Պատարագ մատուցեց, առնութեան ընթացքին ներկայ էին Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեանը եւ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պերթիզլեանը: Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ դպրապետ բարշ. Սարգիս սրկ. Սարգիսեանի:



Առաջնորդ Սրբազան Յայրը օրուան պատգամը ուղղեց հաւատացեալներուն, բնաբան ունենալով Պօղոս առաքեալի երբայցիներուն գրած նամակի հետեւեալ համարը. «Մենք այլ, որ բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, պայքարինը չարին դէմ»:

Սրբազան Յայրը դիտել տուաւ, որ մարդը Աստուծոյ ստեղծագործութեան պսակը կը կազմէ, հետեւաբար ան հրաւիրուած է հոգեւոր ուղեւորութեան ընթացքին հաւատքով պայքարելու եւ կատարելութեան հասնելով Աստուծոյ միակալու:

Անդրադառնալով սուրբերու վարքին եւ հաւատքի գօրութեան, Մասիս եպիսկոպոս դիտել տուաւ, որ հակառակ հալածանքներուն եւ չարչարանքներուն, անոնք չվախցան մահէն, այլ իրենց հոգիներու փրկութեան համար հաստատուն մնացին քրիստոնէական հաւատքին վրայ եւ այսօր որպէս կենդանի վկաներ մեզ եւս կ'առաջնորդեն դէպի Աստուած:

Պատմական եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, Սրբազան Յայրը շնորհաւորեց Բերիոյ Յայոց Թեմի ժողովականներն ու ժողովուրդի գաւակները: Այս առիթով ան գնահատեց եկեղեցւոյ Զահանայ Յայրերը, Թաղական Խորհուրդը, Աղքատախնամ կազմը, Տիկնանց յանձնախումբը եւ բարերարները, որոնք նուիրուածութեամբ լծուած են եկեղեցանուէր ծառայութեան:

Պատարագէն ետք Սրբոց Բառասնից Մանկանց խորանին առջեւ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ եկեղեցւոյ մէջ ծառայած վախճանեալ Զահանայ Յայրերու, ինչպէս նաեւ Արցախի նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար:

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Յայրը «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ, թափօրով առաջնորդուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր դպրաց դասին առաջնորդութեամբ ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղերգը: